



ԵԱԳՈՊ ՔԻՒՆՅԼԵՐ
(1871 – 1949)

**ԱՆՍԷՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԷՋ
ՍԻՐՈՅ ՎԿԱՆ**

ՄՐՏԻ ԽՕՍՔ՝ ԻՔՐԵՒ ՆԱԽԱԲԱՆ

Չկայ հայ մը, որ ծանօթ ըլլալով իր պատմութեան վերջին հարիրամեակի իրադարձութիւններուն, չգիտնայ 1915-ի ողբերգութեան որոշ մանրամասնութիւնները: Ոչ միայն ցեղասպանութեան նուիրուած պատմագիտական հատորները, այլեւ, եւ առաւել եւս, յուշագրական գործերը եւ գեղարուեստական գրականութիւնը լի են ջարդի բացայայտ նկարագրութիւններով: Հետեւաբար, մեզի կը թուի, թէ այդքան բան կարդալէ եւ ուսումնասիրելէ ետք, ալ ոչ մէկ նորութիւն մնացած է, ոչինչ կրնայ անելիով գրգռել մեր ջիղերը: Սակայն զարմանալիօրէն, միշտ ալ դէմ-յանդիման կու գանք նոր նկարագրութեան մը, ահասարսուռ նոր մանրամասնութեան մը, որ ժամանակաւորապէս թմրած մեր ջիղերը կրկին կը ցնցէ ու կ'անհանգստացնէ մեր հոգիները: «Անժամանցելի» մակդիրը, այդպիսով, ոչ միայն ցեղասպանութեան քաղաքական ու ոճրային արարքին յատկութիւնը կը դառնայ, այլեւ՝ ջարդի քստմնելի տեսարաններու պատճառած հոգեխոցին ու խռովքին:

Վեր. դոկտ. Պեռնարտ Ռոթէնի այս գիրքին վրայ աշխատանքը մեզ մատնեց այդ հոգեվիճակին: Մարդուն հանդէպ մարդ արարածին տածած ատելութիւնը կը մնայ անբացատրելի: Ոճիրի փաստէն անդին, ինքնին սպանդին դաժանութիւնը վեր է մարդու ընկալունակութենէն: Այս տողերը գրուած պահուն, ռումբեր կը տեղան Լիբանանի վրայ, տասնեակ անմեղ մարդիկ կը զոհուին՝ շէնքերու փլատակներուն տակ մնալով: Կարծես ոչինչ փոխուած է:

Սակայն բարեբախտաբար, 1915-ը գոյացնող սեւին, խաւարին ու արեան ճապաղիքին ընդմէջէն կը շողան պայծառ դէմքերը Եագոպ ու Էլիզապէթ Քիւնցլերներուն, Քարէն Եփփէին եւ միւս բոլոր բարեգութիւն հոգիներուն, որոնք ցաւին, ոճիրին, բռնութեան դէմ ծառացան, եւ «ո՛չ» ըսին Չարին: Այո, անոնց մարդասիրական գործունէութեան բարիքները անսահման են, սակայն ի վերայ ամենայնի, այդպիսիներուն կեանքն ու գործը Չարին հերքումն են այս աշխարհի մէջ, այլապէս կեանքը անտանելի պիտի ըլլար առանց քիւնցլերներու:

Յիշատակը օրինեալ ըլլայ Եագոպին ու Էլիզապէթին, նաեւ բոլոր անոնց, որոնք նոյն նուիրումով ծառայեցին մեր ժողովուրդին: Անոնք զոհին մէջ

տեսան մարդը՝ առանց խտիրի, եւ հետեւելով Աստուծոյ, իրենց անձը նուիրեցին հիւանդին, գաղթականին, որքին ու այրիին, այդպիսով ցոյց տալով թէ Բարին անմահ է, այնքան ատեն որ մարդիկ թոյլ կու տան որ Աստուած գործէ իրենց ընդմէջէն:

Վարձքը կատար վեր. դոկտ. Ռոթէնին, ինչպէս նաեւ Քիւնցլերներուն գործը շարունակող բոլոր մարդասէր անձերուն, որովհետեւ իրենց ուղղուած է մեր Տիրոջ եւ Փրկչին հաստատումը, թէ «...որովհետեւ իմ այս փոքր եղբայրներէս մէկուն ըրիք, ինծի ըրած եղաք» (Աւետարան ըստ Մատթէոսի, 25:40):

Արմէն Իւրնէշլեան (PhD)

**«Ի՞նչ ըրիր. եղբորդ արեան ձայնը գեպնէն
ինծի կը բողոքէ»**

Ծննդոց, 4:10

**303-էն 305 թուականներուն աւելի քան հազար քրիստոնեայ
սպաննուեցաւ Դիոկղետիանոս կայսեր ձեռամբ:**

390-ին Թեսաղոնիկէի աւելի քան հազար բնակիչ սպաննուեցաւ:

**30 դեկտեմբեր 1066-ին աւելի քան երեք հազար հրեայ
սպաննուեցաւ Կրանատայի մէջ:**

**1209-ին աւելի քան եօթը հազար ալպինճենսացի սպաննուեցաւ
Պեզիէրի մէջ:**

**1349-ին աւելի քան վեց հազար հրեայ սպաննուեցաւ Պազըլի,
Յիւրիխի, Սթրազպուրկի եւ այլ եւրոպական քաղաքներու մէջ:**

**8 մարտ 1782-ին իննսունվեց տելաուէր հնդիկ սպաննուեցաւ
Ճնէյտընհաթթէնի մէջ:**

**1888-էն 1908-ի միջեւ աւելի քան մէկ միլիոն հոգի սպաննուեցաւ
Պելճիքական Քոնկոյի մէջ:**

**1904 – 1906 աւելի քան վաթսուն հազար հերերօ սպաննուեցաւ
Նամիպիայի մէջ:**

**24 ապրիլ 1915-էն ետք աւելի քան մէկ միլիոն հայ սպաննուեցաւ
Անատոլիոյ մէջ:**

1992-ին Եագոպ Քինցլեր¹ 8000 որբեր բերաւ Լիբանան՝ անցնելով սուրիական անապատէն: Ինք ու կինը՝ Էլիզապէթ, ստանձնեցին որբանոցի մը կառավարումը Ղազիրի² մէջ, ուր ապաստանած էին հազար վաթսունչորս որբեր, որոնց համար անոնք Մամա եւ Փափա Քինցլեր էին: Այնտեղ որբերը ջանասիրաբար հմտացան արհեստներու մէջ: Եագոպ հայր էր նաեւ երիտասարդ աղջիկներուն՝ անոնց ամուսնութեան ատեն: Զուիցերիացի բարերարներու շնորհիւ ան Ղազիրէն ներքեւ այրիներու համար տուներ շինեց: Պէյրութի մէջ ան հիմնեց կոյրերու եւ տարեցներու կեդրոն մը (Centre Armenien des Handicapés au Liban)³: Անոր եռանդը, ինչպէս նաեւ զուիցերիացի բարեկամներու նուիրատուութիւնները կարելի դարձուցին Ազունիէ⁴ շրջանի լեռնային մաքուր մթնոլորտին մէջ թոքախտաւորներու հիւանդանոցի⁵ մը կառուցումը 1937-ն: Քինցլերներու դուստրը՝ Իտա, իր կեանքը ամբողջովին նուիրեց Լիբանանի եւ ամուսնացաւ շէյխ Ալամէտտինի հետ⁶:

- 1 Կը հետեւինք 1999-ին հրատարակուած գրքին ուղղագրութեան՝ միօրինակութիւնը պահպանելու համար:
- 2 Պէյրութ մայրաքաղաքէն մօտ. 27 քմ հեռու, Քեսրուանի մարզին մէջ միջին 380 մ բարձրութեան վրայ գտնուող գիւղ մը:
- 3 Ծանօթ նաեւ ՔԱՀԼ անունով, կը գտնուի Պուրճ Համուտի շրջանին մէջ: Կը պատկանի Հայ առաքելական եւ Հայ աւետարանական համայնքներուն: Կուրանոցի բաժինը այժմ կը ծառայէ ընկերային-բարեսիրական ծառայութիւններ մատուցելու:
- 4 Պէյրութ մայրաքաղաքէն մօտ. 35 քմ հեռու, Ալէյի մարզին մէջ միջին 1100 մ բարձրութեան վրայ գտնուող գիւղ մը:
- 5 Ազունիէի ազգային բուժարան: 1923-ին հիմնուած է Մա'ամըլթէնի ծովեզերեայ շրջանին մէջ, սակայն կլիմայական եւ այլ անպատեհ պայմաններու պատճառով, 1938-ին փոխադրուած է Ազունիէի լեռնային շրջանը՝ նորակառոյց հիւանդանոցային համալիրի մը մէջ:
- 6 Իտա եղած է Քինցլերներուն երրորդ զաւակը: Ուսանած է Զուիցերիա, Պաղեստին եւ Լիբանան, ուր մասնագիացած է բժշկութեան մէջ վկայուելով Պէյրութի ամերիկեան համալսարանէն (AUB): Ամուսնացած է Շէյխ Ալամէտտինին հետ, որ եղած է լիբանանի ազգային օդանաւային ընկերութեան (MEA) տնօրէնը: Ծնողքին կեանքին եւ գործին մասին գրած է ուշագրաւ գործ մը՝ *Ida Alamuddin Papa Kuenzler and the Armenians*, Heinemann, London 1970, 167 էջ: Հայերէնի թարգմանած է Թորոս Թորանեան, Իտա Ալէմէտտին, *Փափա Քինցլեր եւ հայերը*, հրտ. ՄՏԿԿ Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակի (թիւ 36), տպ. ՄՏԿԿ, Անթիլիաս, Լիբանան, 1989, 190

Անկէ առաջ Եագոպ Քինցլեր 20 տարի իբրեւ բուժակ աշխատած էր Ուրֆայի⁷ մէջ (Շանլիուրֆա քաղաքը ներկայի Թուրքիոյ տարածքին): 1915-ին ան ականատես եղաւ այն ահաւոր ոճիրին, որ հետագային պիտի կոչուէր նոր ժամանակներու ցեղասպանութիւնը: Այրեր, կիներ, մանուկներ եւ տարեցներ կողոպտուեցան իրենց պատիւէն եւ ունեցուածքէն, տարագրուեցան, բռնութիւններու ենթարկուեցան, բռնաբարուեցան եւ կանխաձրագրուած կերպով սպաննուեցան: Անոնց մեծամասնութիւնը հայեր էին: Սակայն, երկիրը «մաքրուեցաւ» նաեւ ասորիներէն, արամէացի քրիստոնեաներէն եւ իսլամ քիւրտերէն: Զոհերուն թիւը կ'ենթադրուի ըլլալ մէկ միլիոնէ աւելի:

Եագոպ Քինցլեր իր կնոջ եւ մի քանի գործընկերներուն հետ կրնար լոյս քիչերու օգտակար ըլլալ եւ հոգ տանիլ: Իր վարած դարմանատունը ապաստան դարձաւ եւ բժշկական օգնութիւն տրամադրեց զոհերու փոքր թիւի մը միայն՝ աներեւակայելի դաժանութեան մշտական յորձանքի մէջ:

Երբ ուրիշներ անզգայ ու անտարբեր մնացին, Եագոպ Քինցլեր եւ կինը սիրոյ անյողդողդ ուժով յաջողեցան արհամարհել վախը եւ մշտապէս տանջողներուն հետ եղան: Եագոպ Քինցլեր արձանագրած է տեսածներն ու լսածները իր անձնական գրառումներուն մէջ, ուր անհաւատալի ողջամտութեամբ ան կը նկարագրէ իր անմիջական շրջապատին մէջ կատարուածները, պատկերելով, թէ մարդիկ ինչպէս անամօթաբար, վատօրէն եւ անսրտօրէն ի գործ դրին սպաննելու եւ կողոպտելու «արիեստը»: Այդուհանդերձ, ան խիստ դատաւճիռ չ'արձակեր ոճրագործներուն հանդէպ: Այս գրառումները հրատարակուած են 1921-ին Եոհան Լեփսիուսի⁸ կողմէ *Արեան եւ*

էջ: Իտա հեղինակ է նաեւ *Maktoob*, Quartet Books, 1981, London 199 էջ: Իտայի ամուսնական եւ ընտանեկան կեանքին մասին տես Alamuddin, Najib, *The Flying Sheikh*, Quartet Books, UK, 1987.

7 Ուրֆա կամ Ուռհա, պատմական Եդեսիա քաղաքը, այժմու Թուրքիոյ հանրապետութեան հարաւարեւելք՝ Եփրատէն 80 քմ. արեւելք: 1915-ին ունեցած է 12,000 հայ բնակիչ:

8 Johannes Lepsius (1858, Փոցտամ, Գերմանիա – 1858, Մերան, Իտալիա): Գերմանացի հայասէր բողոքական հոգեւորական, արեւելագէտ, որ համիտեան ջարդերէն սկսեալ, նամանաւանդ հայոց ցեղասպանութեան օրերուն ահագին աշխատանք կատարած է ջարդերուն մասին եւրոպական հանրութիւնը իրազեկելու համար: Հայոց վրայ գործադրուած ցեղասպանութեան նիւթով

արցունքի երկրին մէջ⁹ վերնագրով. 2007-ին լոյս տեսաւ անգլերէն թարգմանութիւնը¹⁰: Յայսօր, այս գրառումները կը համարուին այդ ժամանակներու կարեւորագոյն վկայութիւններէն: Մարդկային իրաւանց եւրոպական դատարանին մէջ բեկումնային դատական նիստի մը ընթացքին աշխարհահռչակ իրաւաբան Ամալ Քլունի մէջբերում կատարեց Եագոպ Քիւնցլերի գրառումներէն:

Եագոպ Քիւնցլերի նուիրումը ցուցահանդէսը կը միտի ոգեկոչել անոր սիրոյ մեծ գործը եւ վերանորոգել Չուիցերիոյ եւ Լիբանանի միջեւ հին կապը: Ընդդէմ մոռացումի եւ բռնութեան՝ ան կ'ուզէ յիշեցնել խոստումը, որ «Սէրը անվախճան է» եւ «Յոգնութիւնը առանց վարձապրութեան չի մնար»: (Ա. Կորնթացիս, 13:8 եւ 15:58):

Ցուցահանդէսը կը բնութագրէ Եագոպ Քիւնցլերի գործը երկու բաժինով: Կարմիրով նշումները յիշեցում են արնաշաղախ անարդարութեանց, որոնք տակաւին կ'արատաւորեն մեր ճամբան: Աստուածաշունչէն հինգ բառ եւ երգի մը տունը կը ցոլացնեն լոյսը, որուն ընդմէջէն Եագոպ Քիւնցլեր անձամբ տեսած է իր սիրոյ գործը: Նստարաններուն դրուած տախտակներուն վրայ կարճ մէջբերումներ են գիրքէն, որուն շնորհիւ Ուրֆայի մէջ սարսափի տարիներուն առնուած իր գրառումները հասանելի դարձան մեծաթիւ ընթերցողներու: Այդ գիրքը հրատարակուած է 1921-ին, իսկ 2007-ին լոյս տեսած է անգլերէն թարգմանութեամբ *In the Land of Blood and Tears* (արեան եւ արցունքի երկրին մէջ) վերնագրով:


Լաթերը կը ծածկեն այն նկարները, որոնք գաղտնօրէն լուսանկարած եւ երկրէն հանած է գերմանացի բանակային բժիշկ

հեղինակած է երեք գիրք ու բազում յօդուածներ եւ ունեցած է բազմաթիւ ելոյթներ:

9 *Im Lande des Blutes und der Tränen: Erlebnisse in Mesopotamien während des Weltkrieges (1914-1918)* (Արեան եւ արցունքի երկրին մէջ - փորձառութիւններ Միջազգետքի մէջ համաշխարհային պատերազմի տարիներուն): Հրատարակուած է 1921-ին, գերմաներէն վերահրատարակութիւնը 1999-ին եւ 2004-ին (Չուիցերիա, խմբագիր Հանս Լուքաս Քիզլըր):

10 *In the land of Blood and Tears (Experiences in Mesopotamia During the World War (1914 – 1918)*, թարգմանիչ՝ Ճոֆրի Սթայնհըրց, խմբագիր՝ Արա Ղազարեանց: Հրտ. Հայ մշակութային հիմնարկի, ԱՄՆ, 2007, 187 էջ: Գիրքը այսուհետեւ պիտի նշուի “In the land...” նշումով:

Արմին Վեկներ: Անոնք երկար ատեն նիւթականացուցած են հայոց տառապանքին պատկերը: Սակայն միայն 2011-ին է, որ լուսանկարները



հրատարակուած են լուսանկարիչին գրառումներով:

Յուզահանդէսը կը պատմէ, թէ ինչպէս զուիցերիացի որբը¹¹ դարձաւ մանուկներու ընկեր եւ փրկիչ: Եագոպ Քիւնցլեր պիտի չուզէր որ մարդիկ պաշտեն զինք, բայց պիտի փափաքէր, որ իր կեանքը դառնար մարդոց աշխատանքներուն համար արիութեան օրինակ եւ Աստուծոյ հանդէպ նոր վստահութիւն ստեղծելու առիթ:



Օգոստոս 19-ին¹² թուրք ոստիկաններ խուզարկեցին հայոց թաղամասի տուները՝ փնտռելով հայ դասալիքներ: Յանկարծ անոնք յայտնուեցան շրջափակումի մէջ եւ խափանարարի մը կողմէ ենթարկուեցան հրացանաձգութեան: Անոնցմէ մին սպաննուեցաւ, մինչ միւս երկուքը փախան եւ դէպքին մասին տեղեկացուցին

11 Քիւնցլերի մանկութեան դրուագներուն մասին կարելի է կարդալ *Փափա Քիւնցլեր եւ հայերը* գիրքին մէջ (տես ծնթգրթ. 4): Գիրքը այսուիւետեւ պիտի նշուի «Փափա...» նշումով: Տես նաեւ *Եագոպ Քիւնցլեր* գիրքը (էջ 30-31), լոյս տեսած անոր հայանպաստ գործունէութեան 40-ամեակին առթիւ, Տպ. Ռոթոս, Պէյրութ – Հալէպ, 1946, 243 էջ: Գիրքը այսուիւետեւ պիտի նշուի «Եագոպ...» նշումով:

12 Այս եւ յաջորդ վկայութիւնները՝ մինչեւ էջ 25, քաղուած են Քիւնցլերի գրառումներէն:

նստիկանության: Երբ Կ.Պոլսէն եկած երկու կոմիտէականները¹³ իմացան պատահարին մասին, «կորչին կեաւորները (անհաւատները), ինչու՞ կը դեռ տատամսիք» կոչ ուղղեցին ամբոխին:

Այս կոչը սիրալիր ընդունելութիւն գտաւ: Անգէնը աճապարեց տունէն բերելու իր զէնքը, իսկ զինուածը անմիջապէս լծուեցաւ քրիստոնեաները բնաջնջելու գործին, թիրախաւորելով առաջին պատահական անձը, որուն կը հանդիպէր: Հիւանդանոցէն կը տեսնէի թէ ինչպէս քիւրտերը կը վազէին դէպի իրենց թաղամասը, որ մեր հիւանդանոցին պէս կը գտնուէր քաղաքի պարիսպներէն անդին, եւ վայրկեաններ անց կը յայտնուէին զինուած՝ վազելով դէպի շուկայ: Մինչեւ մայրամուտ պէտք է սպաննէին այնքան քրիստոնեայ՝ որքան կրնային:

Սակայն բարեբախտաբար, առաջին կրակոցներէն անմիջապէս ետք հայերէն շատեր փակած էին իրենց խանութները: Ուրիշներ բարեմիտ մահմետականներու կողմէ նախազգուշացուած էին, որ տուն աճապարեն: Սակայն դժբախտաբար, ոչ բոլորը ատենին տեղեակ եղան գալիք վտանգին մասին, հետեւաբար ոմանք բռնուեցան տուն մեկնելու իրենց ճամբուն վրայ: Սարսափելի հալածանք մըն էր, սոսկալի ջարդ մը:

Դերձակ Գէորգն ու իր չորս աշկերտները շուկայի խանութին մէջ այնքան տարուած էին գործով, որ նոյնիսկ չնշմարեցին քիւրտերուն եւ թուրքերուն չարագուշակ նախապատրաստութիւնները: Գէորգին արհեստանոցը կը գտնուէր շուկային ծայրը: Ոհմակը նախ հոնկէ պէտք է անցնէր. ոճրագործները շուտով եկան: Մինչեւ Գէորգ անդրադառնար վտանգին, սուր դանակ մը արդէն անոր վիզը կտրած էր: Աշկերտներէն ո՛չ մէկը կրցաւ փախչիլ: Անոնցմէ ո՛չ մէկը մտածեց գէթ մկրատով մը ինքզինք պաշտպանել: Արիւնը հոսեցաւ խաղաղասէր դերձակին խանութին սեմէն: Յաջորդ օրը արեան աւազանը նշմարելի էր փողոցին մէջ: Հինգ դիակները փռուած էին ամբողջովին կողոպտուած խանութին մէջ:


13 Խօսքը Երիտթուրքերու մասին է: Այդ անունով ճանչցուած էին սուլթանին դէմ յեղափոխութիւնը կատարած եւ իշխանութեան տիրացած, ապա հայոց վրայ գործադրուած ցեղասպանութիւնը յղացած, ծրագրած ու գործադրած թուրքերը:

Միսիոնարութեան հիւանդանոցին քով կը գտնուի բերդանման տուն մը, որ կը պատկանէր մասվաճառ Գիքոյի բազմանդամ ընտանիքին: Գիքօ եօթը չափահաս որդիներ ունէր, որոնցմէ երկուքը սպաննուած էին Տիարպէքիի ճամբուն վրայ:

Քիւրտ ամբոխը այդ իրիկուն աչք դրած էր այդ տունին վրայ, երբ կը վերադառնար շուկային ու քաղաքին մէջ իր արիւնոտ գործէն: Սակայն երկու ամուր եւ կղպուած դարպասները դիմացան յարձակումին: Ամբոխը տեղեկացաւ, որ այրերէն միայն ծեր Գիքօն եւ անոր նոյնքան ծեր եղբայրը տունն են: Քիւրտերը այնքան սաստիկ կը պոռային, որ մենք հիւանդանոցէն սարսուռով կը լսէինք անոնց գոչիւնները: Անոնք կը պահանջէին երկու ծեր կիները եւ կ'ուզէին պղծել այդ գիշեր տունին մէջ գտնուող բոլոր կիները: Այս բոլոր պոռչտութիւններուն կ'ընկերանային աջ ու ձախ սփռուող մոլեռանդ հայիւզներ եւ անէծքներ:

Հիւանդանոցին պաշտպանութեան համար կառավարիչէն պահանջուած երկու ոստիկանները նոր հասան: Ուրիշներ ալ պէտք է եկած ըլլային քաղաքի այս շրջանը: Բոլորէն խնդրեցի պահպանել խաղաղութիւնը եւ անդորրութիւնը: Այդպէս ալ ըրին եւ հեռացուցին իրենց անարգ կիրքերուն յագուրդ տալու ձգտող արեան ծարաւ ամբոխը:

Յաջորդ առտու, Գիքօն իր տան առջեւ մեռած գտայ: Ան զոհուած էր իր հարազատներուն համար, այն յոյսով, թէ ոճրագործները կիներն ու մանուկները հանգիստ կը թողուն: Յաջորդ առտու իր թաքստոցէն գտայ եւ քովս բերի անոր եղբայրը:



Երկու երիտթուրքերը հիմա հրամայեցին ջարդել բանուորական ջոկատները: Հայ մը, որ այդ խումբին մէջ էր, յաջողած է ազատիլ: Պիտի ձգեմ, որ ինք պատմէ իր պատմութիւնը:

«Շաբաթներէ ի վեր չորս հարիւր հայրենակիցներու հետ բանուորական ջոկատներու մէջ կ'աշխատէինք Քարաքէօփրիւի¹⁴ ճամբուն վրայ: Օգոստոս 15-ի երեկոյեան մեզմէ հարիւր ութսուն հոգի անունով կանչուեցանք, որ պատրաստուինք գիշերը մեկնելու, որպէսզի ճամբուն մէկ մասը անցանելի դարձնենք քանի մը ժամ անդին գտնուող թնդանօթներուն: Ընթրիքէն ետք, մեզի հրամայեցին նուագել, որ յաճախ կը պատահէր, եւ մենք կ'ենթարկուէինք, քանի որ զինուորի մեր կեանքին մէջ հաճոյքի միջոց էր այդ: Ժամը իննին կրակմար յայտարարուեցաւ: Երկու ժամ ետք ճամբայ ելանք: Երկու ժամ քալելէ ետք կեցանք եւ մեզի արտօնութիւն տրուեցաւ սիկարէթ մը ծխելու: Դեռ չէինք գիտեր, թէ ինչ պիտի պատահէր մեզի:

Հազիւ քառորդ ժամ հանգիստ ըրեր էինք, երբ քաղաքէն եկած քառասուն ոստիկաններ խուժեցին մեր ուղղութեամբ: Իրենց հետ կային իրարու շղթայուած տասնհինգ հայեր: Ոստիկանները շրջապատեցին մեզ եւ հրաման հնչեց մեզ ալ իրարու կապելու: Գիտցանք որ ժամը հասած է:

Կէսօրէ ետք էր, երբ յանկարծ հրամանը հնչեց. ԴՈՒՐՍ: Ծանօթէն շրջապատուած՝ մեզ առաջնորդեցին դէպի գիւղ: Լաթերու կոյտ մը կար դիզուած. մեր ընկերներուն հագուստներն էին: Մեզի հրամայեցին մեր հագուստները հանել: Միայն մեր շապիկները կրնայինք հագած մնալ: Ապա արիւնոտ չուաններով մեզ զոյգ-զոյգ կապեցին, եւ հրամայեցին առաջանալ: Մի քանի վայրկեան քալեցինք սպաննուած հայրենակիցներու իրարու վրայ դիզուած մարմիններուն քովէն, որոնք դեռ կը ջղածգուէին մահուան տառապանքէն: Հասանք ժայռակտորի մը մօտ: Հոս ոստիկանները եւ անոնց ընկերակցող թուրքերը, որոնք քաղաքէն եկած էին, սկսան մեզ ծաղրել իբրեւ դաւաճաններ:

Առջեւի երկուքին կապանքները քակուած էին: Մէկ առ մէկ ժայռէն վար պէտք է նետուէին, բայց նախ ստիպուած էին անցնիլ երկու ոստիկաններու առջեւէն, որոնք երկար դանակներով զինուած՝ մի առ մի կը դաշունահարէին զոհերը: Երբ կարգս հասաւ, առանց

14 Ուրֆայի գիւղերէն, կը կոչուի նաեւ Սատանայի հովիտ:

ուշադրութիւն գրաւելու կրցայ քակել կապը, որ զիս կը կապէր ընկերոջս: Երբ առաջանալու հրաման տրուեցաւ մեզի, խոշոր քար մը առի եւ նետեցի ոստիկանին կուրծքին. ինկաւ: Չսպասեցի, որ միւսը դանակով հարուածէ զիս եւ անմիջապէս վար նետուեցայ ժայռէն, առանց վնասուելու: Հրացանի կրակոց մը հնչեց ետեւէս, բայց փամփուշտը վրիպեցաւ: Դուրս ցցուած ժայռին տակ ժամանակաւոր ապաստան գտայ:

Երբ բոլոր վաթսուոն ընկերներս ժայռէն վար նետուած էին, ոստիկաններն ու թուրքերը վար իջան, ստուգելու համար թէ ողջեր կան: Դէմքիս վրայ պառկեցայ եւ մեռած ձեւացայ: Երբ զիս կը քաշէին, ոստիկաններէն մին ըսաւ.- «Կարծես սա է այն շունը, որ դիմադրեց»: Այդ թոպէին փամփուշտ մը ստացայ եւ զգացի տաք արեան հոսքը կոնակէս վար:

Վերջապէս ոճրագործ ամբոխը հեռացաւ: Քիչ անց քիւրտ մը եկաւ եւ սկսաւ «Պեյոժ, Պեյոժ» կանչել: Պեյոժն մեր տղոցմէ էր, որ ողջ մնացած էր, ու սկսաւ թեթեւօրէն շարժիլ՝ ի պատասխան կանչին: Քիւրտը անոր ականջին փսփսաց, որ մեծ քարի մը ետեւ պահուրդի. ցերեկով չէր կրնար զայն ազատել: Պեյոժ ծանրօրէն վիրաւորուած էր, բայց քիւրտը, որ անոր գործընկերն էր, կ'ուզէր փրկել զայն: Չեմ գիտեր թէ կրցաւ, կամ ոչ: Երբ քիւրտը մեկնեցաւ, փորձեցի ոտքի կանգնիլ: Հուսկ, տասնհինգ հոգի էինք, որ չէինք մեռած. ծանր վիրաւոր էինք, բայց կրնայինք շարժիլ: Խորհրդակցեցանք մեր ընելիքին մասին: Առաջարկեցի, որ այդ գիշեր գիւղ վերադառնանք: Սակայն, մեծամասնութիւնը ուժ չունէր, ուստի իրիկունը միայն երեք հոգիով ճամբայ ելանք: Սօտակայ պարտէզի մը մէջ ուժերնիս վերագտանք սեխ ուտելով: Մութին մէջ քանի մը ժամ քալելէ ետք, լսեցինք որ մեծ խումբ մը դէպի մեր կողմը կը շարժէր: Հանդիպակաց այգիի մը մէջ պահուրդեցանք: Ուլքէր էին մեզի մօտեցողները: Օ'հ, ճանչցանք զիրենք. մեր ջոկատի քսան տղաքը, որոնք առջի օր Քարաքէօփրի մնացեր էին: Անոնք ալ գացին նոյն ճամբէն, ուրկէ մենք անցած էինք:

Այդ գիշեր դեռ չէի կրնար աւելի երկար քալել. երկու ընկերակիցներս ալ ուժասպառ էին, ուստի որոշեցինք այգիներուն մէջ, որթատունկերուն տակ ապաստան գտնել: Միայն յաջորդ գիշեր կրցանք Ուրֆա հասնիլ: Օգոստոսի 19-ն էր: Փողոցները փռուած դիակներ տեսանք: Ուրեմն

հոս ւլ ջարդ եղած էր: Երկար ատեն տանս դռան առջեւ մնացի՝
թակելով ու կանչելով: Վերջապէս, կինս ճանչնալով ձայնս՝ բացաւ
դուռը»: Այսքան հայերէն քաղուած:



Հապա այս տարաբախտ մարդոց տեղահանութիւնը...: Կայ որեւէ գրիչ, որ նման բան կարենայ նկարագրել: Կիները չէին ուզեր փողոց ելլել, իսկ ոստիկանները զանոնք տուններէն դուրս կը հանէին մտրակներով: Դուրսը՝ փողոցին մէջ, կին մը գետին պառկեցաւ եւ չէր ուզեր շարժիլ: Ոստիկանը զայն տեղւոյն վրայ պէտք է սպաննէ, ուստի սուինով կը հարուածէ, բայց ան տակաւին տեղէն չի շարժիր: Կրկին կը հարուածէ, բայց ոչ՝ սպաննելու, այլ վիրաւորելու համար: Արիւնը կը ծորար կնոջ վերքերէն. վերջապէս կ'որոշէ ոտքի ելլել եւ կը հեռանայ:

Այդ կինը խելագարուած է: Ան հերարձակ կը թափառի՝ երգելով ու խնդալով:

Անդին, այլ կին մը կը փորձէ կողմնակի նրբանցք մը մտնելով՝ խուսափիլ [տեղահանութենէ]: Ոստիկան մը կը նշմարէ անոր արարքը, կը հետապնդէ ու կը սպաննէ զայն: Ան ամէլի բախտաւոր եղաւ իր ճակատագրակից քոյրերէն:

Բազմաթիւ իսլամներ կանգնած կը սպասեն քաղաքէն դուրս. երբ հայ կիներ կը յայտնուին, իսլամները կը յափշտակեն զանոնք ու կ'անհետանան անոնց հետ:

Հայ վաճառականի մը տասնչորս տարեկան աղջիկը կ'անցնի: Թուրք մը կը փնտռէ զայն ու կը գտնէ, բայց ան կը պաշտպանէ ինքզինք. կը նախընտրէ տափաստանին մէջ մեռնիլ, քան իսլամի մը տունը մտնել: Ոստիկան մը կ'անցնի հոնկէ. չ'ուզեր օգնել թուրքին, բայց վերջինիս ձեռքին մէջ փայլող ոսկեդրամը իր դերը կը կատարէ: Ընդդիմացող աղջիկը կ'անհետանայ թուրքին հետ: Հարեմին մէջ տխուր ճակատագիր մը կը սպասէ անոր:

Արդէն պատմեցի թէ ինչ եղաւ այդ դժբախտներուն [տեղահանութեան] ճամբուն վրայ: Կասկած չկայ, որ ուրֆացիները դատապարտուած էին անապատին մէջ մեռնելու. սա յստակ նպատակ եւ ծրագիր էր: Հետեւաբար անոնք անընդհատ կը տեղաշարժուէին, մինչեւ որ տեղափոխուող չմնար:

Տեղահանութիւնը չաւարտած, մեր բոլոր պաշտպանեալները նոյն օրը եւ նոյն ժամուն մեր տուններէն խլուեցան: Դեռ յոյս ունէինք, որ թոյլ կու տան մեզի, որ պահենք զանոնք: Ժողովուրդը տուններէն դուրս

հանուեցաւ, մինչ մեր կացարանները կրկին խուզարկուեցան: Քանի որ կ'ենթադրէի, թէ մեր բոլոր ապաստանեալները արդէն դուրսն են, տունը խուզարկող ոստիկանի մը ներկայութեան անգիտակացաբար պահարան մը բացի եւ ահա՛, երիտասարդ կին մը դուրս ցատկեցաւ. խնդաց: Անշուշտ ան ալ միացաւ տեղահանուողներուն:

Ինը տարեկան տղաս լացակումած խնդրեց ոստիկանէն, որ մեծ-մայրիկը տեսնէ: Կը մտածէր, թէ ան պէտք չէ երթայ ոստիկանին հետ. համբուրեց ձեռքը ոստիկանութեան տնօրէնին, որուն աչքերը, իրենց կարգին, արցունքոտուած էին: Բայց ապարդիւն. կինը պէտք է մեկնէր: Ո՞վ է այս մեծ-մայրիկը: Վաթսունհինգ տարեկան այրի կին մը, որ տասնվեց տարիէ մեզի կը ծառայէր, բայց մեր ընտանիքին համար աղախինէ աւելի էր. ան մեր զաւակներուն համար տատիկ էր ու ինք ալ այդպէս կը զգար:

Յաջորդ առտու մեծ-մայրիկին մնալուն մասին խօսելու համար կինս նորէն հրամանատարին քով գնաց, որ արդէն ամէնէն գեղեցիկ աղջիկները ընտրած էր, իսկ չուզածները բաժնած՝ իր սպաներուն: Ան կնոջս ըսած է. «Տու՛ր ինծի աղջիկը եւ մայրը քեզի կու տամ»: Սակայն կինս արդէն բան չէր կրնար ընել, քանի որ աղջիկը արդէն մեր քով չէր:

Երբ կիները կը տարուէին, ես միսիթարեցի զիրենք ըսելով, որ իրենք ոստիկանատուն կը տարուին, պարզապէս որպէսզի իրենց ինքնութիւնը ստուգուի, եւ յաջորդ օրը կը վերադառնան: Բայց ծերունի Մարիամը՝ բարի մեծ-մայրիկը ըսաւ. «Օղլու՛մ, տահա կելմէմ» (Տղաս, դեռ չեմ գար): Ան թուրքը աւելի լաւ կը ճանչնար: Բայց Մարիամ իր տեղահանութեան յաջորդ գիշերը վերադարձաւ: Իրեն արտօներ էին ուրիշ կիներու հետ կառք մը վարձել: Ոսկին օգնեց եւ իրենց վարձած կառապանը քաղաքին մօտ իջեցուց զիրենք: Մարիամ եւ աղջիկը առտուն վերստին յայտնուեցան մեր տան դիմաց, բայց հազիւ տեղաւորուած՝ ոստիկանները կրկին եկան իրենց ետեւէն:

Կիները փախսան ետեւի դուռէն եւ փորձեցին մօտակայ այգիի տնակին մէջ պահուրդիլ: Սակայն քանի ոստիկանները տեսեր էին անոնց տուն մտնելը, նախ տունը պրպտեցին, ապա՝ մօտակայ պարտէզները, ու գտան զանոնք: Երրորդ անգամ ալ չվերադարձան:





«1915-ի ջարդերուն աստեն ծնողներս Տիվրիկէն¹⁵ Սվազ¹⁶ տեղահանուեցան: Մեզի թոյլ տրուեցաւ ապրելու ամերիկացի միսիոնարի մը՝ օրիորդ Պէուէրի հովանիին տակ: Մայրս լաւ կրթութեան կը հաւատար, ուստի իր եօթը զաւակները դրկած էր միսիոնարական դպրոց: Ես իմ ուսուցչական կատարելագործումս ստացայ ամերիկացիներէն՝ Խարբերդի մէջ¹⁷: Միակ եղբայրս դեղագործ եղաւ: Բոլոր ազգականներով մեծ ընտանիք մըն էինք եւ մեր հազարաւոր հայրենակիցներուն հետ սփռուած եղանք տարագրութեան ահաւոր ճամբան բռնել:

Գնացքի առաջին քանի մը օրերը գէշ չէին. ամերիկացի միսիոնարներ կ'ընկերակցէին մեզի, սակայն յետոյ կառավարութեան կողմէ ետ դրկուեցան: Անմիջապէս երբ անոնք հեռացան մեզմէ, մեր տառապանքը սկսաւ: Սկիզբը բոլոր այրերը տարուեցան: Մեր աչքերուն առջեւ անոնք նախ սարսափելի փանջանքներու ենթարկուեցան, ապա դանդաղօրէն սպաննուեցան: Հազարաւոր կիներ ու մանուկներ Քըրք Եէօլ¹⁸ գետը նետուեցան: Անցանք լեռնային ճամբաներէ, ուր գրեթէ ոչ ոք կրնար քալել: Օրերով հաց ու ջուր չէին տար մեզի: Սակայն մարդկային մեծաթիւ զոհերը տուինք Եփրատ գետին՝ Սամսատի¹⁹

15 Մերաստիա նահանգի գաւառներէն: Ծանօթ նաեւ իբրեւ Տերիկ: (Աշխարհագրական անուններուն մեծ մասը քաղուած է Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարանէն՝ www.nayiri.com:

16 Մերաստիա քաղաքի այլ անուանումներէն. նաեւ գաւառ նոյնանուն նահանգին մէջ:

17 Խարբերդ նահանգի նոյնանուն քաղաքը: Այնտեղ գործած է ամերիկացի միսիոնարներու Եփրատ գոլէճը, ուր գործած է նաեւ Մանկավարժական դպրոց, որ «յարկացուած է աղջիկներուն եւ այստեղ կը պատրաստուին հայկական վարժարաններու ապագայ մանկավարժուհիներ»: Աղբիւր՝ <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/vilayetofmamuratulaziz-harput/harput-kaza/educationandsport/educationalestablishments.html> (դիտում 12 Սեպտ. 2024):

18 “In the Land...”-ին մէջ տուեալ գետը կը յիշուի Kizil Irmak (Կարմիր գետ) անունով, որ Փոքր Ասիոյ Ալիս (յուն.՝ Հալիս) գետն է:

19 Պատմական Սամոսատ քաղաքի նոր անուանումը, իբրեւ հայաբնակ գիւղ Խարբերդի նահանգին մէջ:

մօտակայքը: Կասը հազարէ աւելի մարդիկ յանձնուեցան գետի յորձանքներուն՝ թուրքերուն կողմէ: Գետին միւս ափը սպասեցինք մէկ շաբաթ, որուն ընթացքին ողջ մնացածներուս դրամը խլեցին եւ պատուազուրկ ըրին մեր աղջիկները: Ամէնէն բարեպաշտ հոգին իսկ մթազնեցաւ: Մարդիկ կրնային դրամով իրենց պատիւը պաշտպանել, բայց երբ բոլոր նիւթական միջոցները սպառէին, արդէն անկարելի էր:

Քանի որ անհնար էր հագուստ փոխել ու լուացուիլ, ամենուրէք կը տիրէր աղտոտութիւն ու գարշահոտութիւն: Մեզմէ շատեր դաշոյնի կամ թուրի վերքեր ունէին, որ չէին կրնար դարմանել: Այդ դժբախտներուն մարմիններուն վրայ որդեր կը վիստային. այլեւս անհնար էր նոյնիսկ նայիլ այդ խեղճերուն: Ի վերջոյ սակայն, արտասովոր անզգայութիւն մը պատեց բոլորիս եւ այլեւս ոչինչ կ'ազդէր մեր վրայ:

Ճամբու ընթացքին անցանք հորի մը քովէն, որ լի էր նեխող մարդկային մարմիններով: Երբ հասանք յաջորդ հորին, մեզ անոր մէջ նետեցին: Սակայն անոր խորքը շատ դիակ կար, իսկ քիչ՝ ջուր, ուստի բոլոր նետուածները չմեռան: Վերէն քարեր կը նետէին մեր վրայ, որոնք եթէ մեզի դպնային՝ ազատում էր [այս մղձաւանջէն]: Դժբախտաբար ինծի քար մը իսկ չդաւաւ. քոյրերէս մին ալ ողջ մնաց այդ դժոխքին մէջ: Ամբողջ գիշերը մնացինք հորին մէջ, բորբոսած օդը շնչելով: Հազար-հազար անգամ մահը կը բաղձայինք:

Երբ յաջորդ առտու ոչ ոք յայտնուեցաւ, որպէսզի քարկոծումով մեր թշուառութեան վերջ տայ, մտածեցինք մեր յաջորդ քայլերուն մասին: Հաւանական ազատումի նպատակով՝ թէկուզ նորանոր չարչարանքներ կրելու գնով, սկսանք դրամ փնտռել մեռելներուն քով. գիտէինք թէ ընդհանրապէս դիակներու մազերուն մէջ պահուած կ'ըլլային: Քիչ մը թրքական դրամ կրցանք հաւաքել եւ երբ յաջորդ քիւրտին գլուխը նշմարեցինք հորին բերանը՝ զնգացուցինք հնչուն ոսկիները: Քիւրտը հասկցաւ մեր առաջարկը ու երկուքս դուրս քաշեց՝ դրամ առնելով իբրեւ վարձատրութիւն: Առայժմ կրցած էինք դժոխքէն ազատիլ: Ինչպիսի մարմաջով թարմ օդը կը շնչէինք:

Երեք օր լեռները թափառեցանք: Գիշեր մը քոյրս կորսնցուցի. չեմ գիտեր ինչ եղաւ իրեն: Այլեւս ամբողջովին միմակ էի. ու՛ր կրնայի երթալ: Վերջապէս հովիւի մը հանդիպեցայ, որմէ խնդրեցի, որ ինծի ցոյց տայ մօտակայ քաղաքին ուղղութիւնը: Ըսաւ, թէ մօտերը բնակավայր չկայ,

բայց ոչ շարի հեռու՝ տարագրության ճամբան էր: Հերետիկայ իր նշած ուղղության եւ շուրջով արդէն կրկին տարագրության մէջ էի՝ ընկերակցութեամբ հայրենակիցներու, որոնք խումբերով մէկտեղուած էին Մուհամմէտ խան կոչուած վայրի մը մէջ:

Հոսկէ ազնիւ իսլամ մը զիս իր հետ Ուրֆա տարաւ: Անունը Մուհամմէտ խալիլ էր, եւ շնորհարար էր: Սաստիկ հիւանդ էի, երբ տեղ հասանք:

Քանի որ չէի լաւանար, ան զիս միսիոնարական հիւանդանոցը տարաւ: Տեղ չկար հոն, ուստի յայտնուեցայ ասորական եկեղեցիի²⁰ ըսկին մէջ, ուր ինծի պէս վերապրած խլեակներ կարօտով կը սպասէին մեռնելու: Վերջապէս կին մը ինծի թելադրեց, որ դիմեմ Քիւնցլերներուն, որոնք կ'օգնէին բոլոր հայերուն: Ճամբայ ինկայ դէպի Քիւնցլերներուն տունը, ուր քառորդ ժամէն կրնայի հասնիլ, բայց հասայ երեք ժամ ետք միայն, քանի որ սարսափելիօրէն տկարացած էի: Տուն հասայ ահաւոր ջերմութեան մէջ. անոնք ինծի տուն հագուստ եւ դեղ, օգնեցին ու պատսպարեցին: Գերագոյն տառապանքս վերջ գտած էր: Աստիճանաբար ապաքինեցայ: Երբ պրն. Քիւնցլեր զինադադարէն ետք որբանոց բացաւ, ուսուցչութիւն ըրի ազգիս փոքրաթիւ վերապրողներուն»:

Ալմաստ Թամասեան²¹



20 Ուրֆայի մէջ եղած է բաւական հին ասորական համայնք, որոնք հակառակ փոքրաթիւ ըլլալուն, եղած են տեղւոյն բնիկներէն: Իրենց եկեղեցիներէն գլխաւորը եղած է Ս. Պողոս Պետրոսը: Աղբիւր՝ <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/vilayetaleppo/ourfa/ourfareligion/ourfa-churches.html> (դիտում 12 Սեպտ. 2024):

21 Կրնայ ըլլալ Թովմասեան կամ Թամազեան



«10 յուլիս 1915-ին Խարբերդի մէջ, երկու հազար այրերու, կիներու եւ մանուկներու հետ ես ալ ստիպուեցայ տունէս հեռանալ: Ամուսինս Ամերիկա կ'ապրէր: Յաջողեցայ քիչ մը դրամ, հագուստ եւ անկողինի պարագաներ բեռնել աւանակի մը վրայ: Տասը եւ տասներկու տարեկան երկու աղջիկներս հետս պէտք է գային:

Մալաթիայի տարածքին դադար մը տրուեցաւ: Երբ Էրզրումէն²² ու Սվազէն տարագիրներու կարաւաններ մեզի միացան, ուղղուեցանք դէպի հարաւ՝ դէպի Տաւրոսեան²³ ցից լեռները: Յաճախ չորեքթաթ կը մագլցէինք ժայռերու վրայէն: Բազմաթիւ մանուկներ եւ ծերեր չդիմացան սաստիկ լարումին ու մահացան: Անոնք մնացին հոն, ուր ուժասպառ ինկան՝ դառնալով գիշակերներու պատրաստ կեր: Մեր ճամպրուկները արդէն շարունգ նետած էինք, մեզի ստիպեցին որ մեր հետ առնուած էշերն ալ վերադարձնենք: Մալաթիոյ²⁴ եւ Արիամանի²⁵ միջեւ գտնուող բարձրադիր հովիտին մէջ քիւրտեր թալանեցին մեզ: Այրերը զարեցին մեզմէ, ապա քշեցին ու սպաննեցին: Հասած էինք այնպիսի վիճակի մը, երբ սիրով պիտի ընդառաջէինք մահուան, եթէ գիտնայինք թէ ինչ ճակատագիր պիտի վիճակուէր մեր զաւակներուն: Սամսատի ճամբուն վրայ կորսնցուցինք աղջիկներէն եւ երիտասարդ կիներէն շատերը: Շրջանի բոլոր քիւրտերը եկան ու տարին իրենց ընտրած կիներն ու աղջիկները:

Գետի միւս ափին՝ Ուրֆայի մէջ, մեր տառապանքը հասաւ իր գագաթնակէտին: Առանց ոսկի կորզելու կաթիլ մը ջուր իսկ չէին տար մեզի: Հրացանի կոթի հարուածով հորերուն քովէն կը հեռացնէին մեզ: Մեծ աղբիւրի մը եզրին, ուր հանգչեցանք մի քանի օր, կողոպտեցին մեր դրամներն ու ոսկեղէնը: Երբ ոչինչ մնաց թալանելու, մեզ քշեցին քարէ անապատ մը, ուր մեծաթիւ քիւրտեր շրջապատեցին ու մերկացուցին մեզ, խլելով ամէն ինչ, որ կրնար քիչ թէ շատ

22 Քաղաք նոյնանուն նահանգին մէջ: Պատմական Հայաստանի Կարին նահանգը:

23 Տաւրոսեան լեռնաշղթայ: Կ'երկարի Անատոլիւն Կիլիկիա եւ հայկական լեռնաշխարհ:

24 Քաղաք Խարբերդի նահանգին մէջ, ծանօթ նաեւ Նոր Մալաթիա (Ենիշեհիր) անունով, ի հակադրութիւն հին Մալաթիային (Էսկիշեհիր), որ ամբողջովին հայաթափուած է 19-րդ դարու կիսուն:

25 Քաղաք Խարբերդի նահանգին մէջ:

արժէք ունենալ: Մերկացումի ընթացքին ի յայտ եկաւ, որ կարգ մը պատրանի տղաք իբրեւ աղջիկ ծափուած էին: Անոնք անմիջապէս պատարոտուեցան: Ապա քիւրպերը քշեցին մեզ՝ մօտաւորապէս երկու հազար մերկանդամ կին ու աղջիկ, դէպի նեղ անցք մը ու սկսաւ ահաւորագոյնը. ամէն կողմէ հրացանաձգութեան ենթարկեցին մեզ. սարսափելի իրարանցում մը սկսաւ. ծայրերը գտնուողները փամփշտահար մեռան, իսկ մէջտեղիները՝ խեղդամահ եղան:

Ես մահէ ազատեցայ, քանի որ դիակներու միջեւ էի: Մեծ ջանքով կրցայ նաեւ երկու դուստրերս հետս քաշել դէպի բարձրադիր վայրը: Անոնց մարմինները ամբողջովին կապտած էին: Երբ քիւրպերը հեռացան, միայն քանի մը հարիւր հոգի ողջ մնացած էր: Յաջորդօրը պէտք է հեռանայինք հոնկէ, քանի որ նեխին գարշահոտութիւնը անտանելի էր:

Երկու զաւակներս գիշեր-ցերեկ խղճուկ ծայնով «մայրի՛կ, հաց» կ'աղաչէին: Երբ մի քանի քիւրպ ձիաւորներ կ'անցնէին մեր քովէն, անոնցմէ խնդրեցի, որ աղջիկներս հետերնին տանին: Աստուծոյ պաշտպանութիւնը եւ մարդոց հոգածութիւնը անոնց հետ ըլլայ: Զանոնք իրենց հետ տարին: Չեմ գիտեր ինչ եղաւ անոնց, այլեւս չտեսայ զանոնք: Երբ գացին, այլեւս չէի կրնար լալ. արցունքներս չորցեր էին: Միակ փափաքս շուրջով մեռնիլ էր:

Մահակարօտ մի քանի կիներու հետ քայլ առ քայլ կ'առաջանայինք: Միջագետքի օգոստոսեան արեւը մեր մերկ մարմինները կը խանձէր: Հերկուած հողին մէջ ձեռքով փոս կը փորէինք եւ միջօրէի արեւէն կը պաշտպանուէինք այնտեղ պառկելով ու հողով ծածկուելով: Նոյն փոսերէն կ'օգտուէինք նաեւ գիշերը, երբ սաստիկ կը ցրտէր. հողը կը պաշտպանէր մեզ ցուրտէն: Մեր մարմիններուն վրայ այրուածքի մեծ հետքերով հասանք Ուրֆայի մօտակայքը գտնուող քրիստոնեայ գիւղ մը, ուր մեզի տունն հաց, ջուր եւ քանի մը կտոր հագուելիք լաթ: Մանուկի կարճ շապիկ մը բաժին ինկաւ ինձի, որով հագիւ կրնայի ծածկել մերկութիւնս 16 օր մերկանդամ մնալէ ետք:

Այդ գիւղին մէջ մեր կեցութիւնը կարճատեւ էր: Ոստիկանները եկան եւ մեզ կրկին խումբին միացուցին: Նոյն օրն իսկ մեզ տարին Ուրֆայի մէջ գտնուող տարագրութեան կայան մը: Ու՛ր երթայի: Կը փափաքէի գերմանական հիւանդանոցը երթալ, բայց տեղը չէի

կրնար գտնել: Թուրք մը յափշտակեց զիս ու բռնի տարաւ իր տունը: Սակայն շուտով սաստիկ հիւանդացայ, եւ թուրքը անձամբ զիս տարաւ միսիոնարութեան հիւանդանոցը, ուր կրցայ առողջանալ:

Ուրֆացիներուն հետ տարագրուելէ ազատեցայ, քանի որ երբ ոստիկանները եկան հիւանդանոցէն բոլոր հայերը տանելու, բարձր ջերմութիւն ունէի: Յետոյ պարոն Քիւնցլերի տունը խոհարար եղայ:

Այդ մանկական շապիկը, որով մերկութիւնս կրցած էի ծածկել, դեռ քովս է եւ մասունքի պէս պիտի շարունակեմ պահել, որպէսզի ամուսինին ցոյց տամ երբ կարենամ կրկին իրեն հանդիպիլ»:

Եղսա²⁶ Պետրոսեան

Օգոստոս 1919-ին կինը Հալէպէն ինձի գրեց, որ ամուսինը Ամերիկայի մէջ մեռեր է: Զաւակները մինչեւ հիմա կը փնտռենք, բայց ապարդիւն են մեր ջանքերը: [Ե.Ք.]

26 Անուան գերմանատառ բնագիրը Vechsa է. կ'ենթադրենք, որ V եւ Y տառերու շփոթի հետեւանք է տարընթերցումը: Նոյն սրբագրութիւնը կատարած են նաեւ Արա Ղազարեանց ("In the land...", էջ 29) եւ տոքթ. Վալադ Վալադեան («Եագոպ...», էջ 76):



Շատ հայեր իսլամ բարեկամներ ունեին, որոնք այդքան ալ անխիղճ չէին, կառավարութեան անպատկառութեան չափով մասնակցելու հայերու բնաջնջումին:

Հայ կիներ եւ մանուկներ, որոնք սպաննուած չէին, ամէն օր կ'անհետանային տարագրութեան կայաններէն: Անոնք ապաստան կը գտնէին այդպիսի մարդասէր իսլամ բարեկամներու քով: Բացի այդ եւ աւելին՝ օրէնք դարձած էր, որ ամէն իսլամ առնէր ու տանէր այդ դժբախտ կիներէն ու աղջիկներէն ինչ մէկը որ հաւնէր: Այս հայ կիները, բոլորն ալ, երբ իսլամի տուն մտնէին, պէտք է իսլամական անունով կոչուէին, թէեւ կրօնափոխ ըլլալու ստիպուած չէին:

Կառավարութիւնը, որ փախուստի այս տեսակէն տեղեակ էր, ի վերջոյ անդրադարձաւ, որ դեռ շատ ողջ հայեր մնացած էին, ուստի այդ պատճառով ալ հրահանգեց, որ ով որ հայ մը կը պատսպարէ, ինք ալ կրնայ տեղահանուիլ:

Զինուորական դատարանը քաղաքին գլխաւոր դատաւորին ալ հրամայեց յանձնել իր քով պահուող հայ քրիստոնեաները: Զայն, իբրեւ պատիժ, յուլիս 1915-ին Երզնկայէն Ուրֆա տեղափոխած էին, քանի որ բողոքած էր հայերու վտարումին դէմ: Այդ դժբախտ օրերուն, ան Ուրֆայի մէջ նախագահեց Ժողովի մը, ուր հայերուն հանդէպ կատարուող վայրագութիւններուն դէմ կեցուածք որդեգրուեցաւ: Ան նաեւ հայ կիներու ապաստան տուած էր իր տան մէջ: Հրամանատարը այդ Ժողովէն ետք կանչեց զայն ու հարցուց անոր. «Ո՞վ ես դուն, որ կը համարձակիս կեդրոնական կառավարութեան դէմ աշխատիլ եւ այդ Ժողովներուն մէջ ջատագովել հայերուն հանդէպ մեղմ վերաբերմունք մը. նոյնիսկ տանդ մէջ հայ կիներ կը պահես հակառակ իմ հրամաններու: Եթէ սա վերջ չգտնէ, պիտի գիտնաս թէ մենք ուժը ունինք քեզ խելքի բերելու»:

Հրամանատարը չսպասեց, որ գլխաւոր դատաւորը պատասխանէ: Ան նշան ըրաւ անոր որ երթայ: Կարելոր է իմանալ, որ գլխաւոր դատաւորը, իբրեւ «քատի», քաղաքին երկրորդ բարձրագոյն դիրքը ունեցող պաշտօնեան է:

Հազիւ տուն հասած, ոստիկաններ եկան [քատիին տունը] եւ հրամանատարին հրամանով հայ կիները տարին հոնկէ: Այդուհանդերձ,

քանի մը օր ետք ան կրկին հայ գաղթականներ պատսպարեց իր տան մէջ:

Իսլամներու մէջ այս քատիէն աւելի ազնիւ հոգիի մը չեմ հանդիպած ընա: Մուհամմէտի հետեւորդներէն ո՛չ մէկուն հետ այնքան մօտ եղած եմ, որքան անոր հետ: Հետագային մենք իրարմէ բաժնուեցանք իբրեւ լաւագոյն բարեկամներ, նոյնիսկ՝ եղբայրներ:

Ուրֆայի քատին ծածկանունով մը կնքուած էր, քանի որ ան միշտ աշխատած է հայերուն տառապանքը մեղմացնելու: Ան կոչուած էր «Էրմենի փափազը» (հայ քահանայ):


Միսիոնարուի օրիորդ Եփփէ²⁷, տանըմարքացի մը, որ կ'աշխատի Գերմանական արեւելեան առաքելութեան մէջ, նոյնպէս համարձակեցաւ եօթը հոգի թաքցնել: Հակառակ երեք մանրակրկիտ խուզարկումներու, ոստիկանութիւնը չկրցաւ զանոնք յայտնաբերել անոր տան մէջ:²⁸ Անշուշտ, ազատարարը ենթակայ էր սաստիկ լարուածութեան՝ այդ անընդհատ յուզագրգիռ վիճակին մէջ: Ան գրեթէ վեց ամիս ջղային անհանգստութենէ կը տառապէր այդ ահաւոր օրերուն պատճառով:


1916-ի ամռան հերթական տնային խուզարկութեան ընթացքին, ոստիկանութիւնը ձերբակալեց մեր արաբ ծառան անկէ ցուցմունք կորզելու համար²⁹: Զինք անխնայ ծեծի ենթարկեցին, բայց քաջ մարդը չյայտնեց իրականութիւնը, որուն ինք լաւատեղեակ էր: Ան ալ իսլամ էր: Յարգանք այդպիսի հաւատարմութեան:

27 Քարէն Եփփէ (1876, Դանիա – 1935, Հալէպ): 1903-ին կը մեկնի Ուրֆա, ուր կը գրադի որբախնամ եւ կրթական աշխատանքով մինչեւ 1917: 1921-ին հայրենիքէն կը վերադառնայ Հալէպ, ուր կը շարունակէ իր որբախնամ աշխատանքը, միաժամանակ աշխատելով նաեւ երիտասարդ որբեւայրի կիներու հետ: Եղած է Ազգերու լիկայի լիազօր ներկայացուցիչ: Սուրիոյ մէջ կը հիմնէ հայկական գիւղեր, մեծապէս կը նպաստէ կրթական ցանցի ստեղծումին:

28 Մանրամասն տե՛ս «Փափա...», էջ 93 – 98:

29 Տե՛ս ծանօթութ. 47:





Հունտվիլի մկրտութեանց արձանագրութեան մատեանէն մէջբերում

Եագոպ Քիւնցլեր կը սերի Վալցընհաուզընի³⁰ հին ընտանիքէ: Ծնած է Ռոթում, Հունտվիլ³¹. Կանուխ տարիքին կը կորսնցնէ հայրը: Ան իր մանկութիւնը կ'անցընէ Թէոյֆընի³² եւ Շթայնի³³ մէջ: Եագոպ կ'երգէ տողոց երգչախումբէ եւ ցիթերա ու շրթհարմոն կը նուագէ: 11 տարեկան էր, երբ մայրը ծանրօրէն կը հիւանդանայ: Կարճատեւ ապաքինումէ ետք, ան ալ կը մահանայ: Եագոպ Շթայնի մէջ հիւսնութիւն սորված է եւ հաղորդուած է³⁴ հովիւ Ճ.Ճ. Մայէրի կողմէ, որ վերադարձած էր միսիոնարական առաքելութենէ:



Ծննդավայրը

30 Զուիցերիոյ Ափսիւնցել Աուսըրիոտըն քանթոնի վարչական կեդրոն:

31 Նոյն:

32 Նոյն:

33 Զուիցերիոյ Շաֆհաուզըն քանթոնի քաղաք:

34 Իմա՝ դարձած է եկեղեցւոյ հաղորդական անդամ:



Ընտանեկան արխիվն. «Մեծ-հայր» Եագոպ Քինցլերը՝ մանուկ դպրոցական, ըստ Շթայնի բերանացի աւանդութեան

In Wien auf Böhmen 1888 Confirmierte

Nr.	Confirmierte	Eltern	Komm. Offiziant	Relig. Amt
1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100	Jacob, Kinsler	David, Kinsler	David, Kinsler	David, Kinsler

Շթայնի հաղորդական անդամակցութեան արձանագրութենէն մէջբերում



Երիտասարդ տարիներուն (© ընտանեկան արխիւ)

Իր երիտասարդության ճամբաները զինք կը տանին Պազըլ³⁵, ուր կ'ենթարկուի վիրահատության եւ ատեն մը կը մնայ հիւանդանոցի մէջ³⁶, ուր կը խնամուի երիտասարդներու կողմէ, որոնք իրենք զիրենք «եղբայր» կամ «սարկաւագ» կը կոչէին³⁷: Անոնք բուժական նախնական գիտելիքներ ունէին եւ քրիստոնէական սիրով կ'ուզէին հոգ տանիլ հիւանդներուն: Եագոպ ինք ալ կը փափաքի այդպիսի սարկաւագ մը ըլլալ: Շնորհիւ իր դիմացկուն եւ ընկերային բնաւորութեան, արագ ըմբռնողութեան, բազմազան հետաքրքրութիւններուն, բացառիկ յիշողութեան եւ ճարտար ձեռքերուն ան կը յաջողի իր նպատակին



Եագոպ Քիւնցլերի լուսանկարը. գործ՝ տոքթ. Հ. Քրիստի
(© Լարոշ ընտանիքի արխիւ)

35 Basel, Հուլիցերիոյ հիւսիսարեւելքը՝ Հռենոս գետի եզերքը գտնուող մեծ քաղաք:

36 Տիքընս եղբայրներու կողմէ կառավարուող հիւանդանոցին մէջ ծառայողները կը մարզուէին իբրեւ բուժակ, նաեւ կը կատարէին Աստուածաշունչի սերտողութիւն՝ պատրաստուելու համար քրիստոնէական ծառայութեան՝ առողջապահական մարզէն ներս:

37 Սարկաւագ բառը այստեղ գործածուած է իր նախնական՝ ծառայող, իմաստով: Յղացքին մանրամասն բացատրութիւնը կարելի է կարդալ դոկտ. Աբէլ Մանուկեանի «Հուլիցերիացի մեծ հայասէր Եագոպ Քիւնցլեր» յօդուածին մէջ, լոյս տեսած keghart.org կայքին մէջ 19 հոկտեմբեր 2014-ին:

մէջ, թէւ ներքին պայքար մը կը մղէ իր անձին հետ, թէ արդե՞՞ք ինք այդպիսի ծառայութեան մը համար բաւարար խոնարհութիւն եւ ուժ ունի:

1899-ի ամռան ան իր աշխատանքէն ետ կը կանչուի: Հայերու աշխարհահռչակ բարեկամ տոքթ. Լեփսիուս հարցուց Քիւնցլերին, եթէ կը փափաքէր իբրեւ բուժակ աշխատիլ արեւելեան Անատոլիո՞ւ՝ Ուրֆայի մէջ: Ան տեղեակ էր, որ հայեր ենթարկուած էին սարսափելի ջարդերու: Նորակառոյց դարմանատուն մը մեծապէս օգտակար կրնար ըլլալ անոնց: Դարմանատան մեծաւորը՝ տոքթ. Հերման Քրիստ³⁸ հանդիպեցաւ Քիւնցլերին հետ Պազըլի քաղաքացիական հիւանդանոցին մէջ եւ առաջարկեց անոր դառնալ իր օգնականը:

1899-ի աշնան Եագոպ Քիւնցլեր հրաժեշտ տուաւ իր հայրենիքին մօրը գերեզմանին առջեւ:



«Նորէն այցելեցի մօրս գերեզմանը, Թէօյֆընի մէջ: Պէտք է զրուցէի մօրս հետ, քանի որ ան աշխարհի ամէնէն սիրելի անձն էր ինծի համար երբ փոքր էի: Գերեզմանին դիմաց ըսի. «Մայր, երկիրներ եւ ծովեր պիտի բաժնեն զիս քեզմէ հիմա, բայց մեր սիրտերը մօտիկ պիտի ըլլան: Կ'ուզեմ ցոյց տալ, թէ քեզի արժանի զաւակ մըն եմ, դուն ինձմով պիտի չամչնաս, այլ պիտի ուրախանաս. Աստուած պիտի օգնէ որ կատարեմ այդ»:

38 Dr. Herman Christ Ուրֆա եկած է 1898-ի աւարտին, ամոքելու համար համիտեան ջարդերէն տուժած հայերու ցաւերը: 1903-ին հիմնած է հիւանդանոցը: Իր անտիպ նամակներն ու լուսանկարները լոյս տեսած են *Doctor, sieh mich an!: Der Basler Arzt Hermann Christ auf medizinischer Mission in der Osttürkei (1898-1903)* (Բժիշկ, ինձի նայիր - Պազըլցի բժիշկ Հերման Քրիստը բժշկական առաքելութեան ժամանակ արեւելեան Թուրքիոյ մէջ (1898-1903) գիրքին մէջ, Chronos Verlag հրտ., Յիւրիխ, 2013, 172 էջ:



**Եագոպ Քիւնցլեր կը պատրաստուի իր առաքելութեան
 (“Die armenische Frage und die Schweiz (1896 - 1923)”)”
 (Հայկական հարցը եւ Զուիցերիան (1896 – 1923) գիրքին կողքը)**

i *Die armenische Frage und die Schweiz (1896 - 1923)*, (Հայկական հարցը եւ Զուիցերիան (1896 – 1923): Գերմաներէն եւ ֆրանսերէն: Խմբագիր՝ Հանս-Լուքաս Քիզըր, Chronos Verlag իրտ., Ցիւրիխ, 1999, 300 էջ:

Հալէպէն ելլելու ճամբուն վրայ երիտասարդ կին մը կը մեղքնայ անվարժ հեծեալին եւ կը դանդաղեցնէ իր գնացքը անոր ընկերանալու համար: Անոնք անկեղծօրէն իրարու կը պատմեն իրենց կեանքին մասին: Էլիզապէթ Պենտէր միսիոնարի մը դուստրն է եւ հապէշ իշխանուհի մը³⁹: Ան նոյնպէս փոքր տարիքին կորսնցուցած է իր երկու ծնողները: Անոնք կը սիրահարուին իրարու, բայց չեն արտայայտուիր այդ մասին: Վեց տարի ետք Եագոպ կը փնտռէ երիտասարդուհին, որ Սկովտիա էր եւ կ’ուզէր բուժքոյր դառնալ: Երբ ան վերջապէս «այդ» կ’ըսէ Քիւնցլերին, կը դառնայ անոր կեանքի ուղեկիցը եւ անոր գործին աջակիցը⁴⁰:

39 Էլիզապէթի մօրենական մեծ-մայրը կը սերի եթովպիական իշխանական ընտանիքէ (մանրամասն “In the Land...”, էջ XXIII):

40 Եագոպ եւ Էլիզապէթ կ’ամուսնանան Սաֆէտի մէջ (Պաղեստին) 7 Նոյեմբեր 1905-ին:



Էլիզապեթ Պենտեր՝ երիտասարդ բուժքույր



Ընտանեկան արխիւ. Եագոպ... եւ Էլիզապեթ Քիւնցլեր իրենց երիտասարդ տարիներուն

Հինգ զաւակ կը ծնի իրենցմէ⁴¹: Անոնց ընտանեկան օրը մշտապէս կը սկսի Աստուածաշունչէն հատուածի մը ընթերցումով, հոգեւոր երգեցողութեամբ եւ աղօթքով: Կիրակի օրերը անոնք ընդհանրապէս կը յաճախեն սուրիական քրիստոնեայ բողոքական եկեղեցին⁴²:

41 Մանչ մը՝ Առնոլտ եւ 4 դուստր՝ Մերի, Իտա, Մարթա եւ Էլիզապեթ (Էլիպեթ): Անոնք նաեւ որդեգրած են Ռոզա Ալահայտոյեան անունով հայ աղջիկ մը:

42 Կարելի չեղաւ ստուգել եթէ այս արտայայտութիւնը ընդհանրական բնութագրում է, թէ՛ յատուկ անուն: Կը միտուինք առաջինին, այդ պատճառով ալ չգլխագրեցինք այն, մանաւանդ, յայտնի չէ, թէ՛ որ ժամանակաշրջանին կը վերաբերի: Այլ ենթադրութիւն մը կրնայ յուշել Լիբանանի ազգային աւետարանական միութեան (National Evangelical Union of Lebanon) Պէյրութի եկեղեցին:

«Մեր ամուսնական կեանքի ընթացքին մենք ի գործ կը դնէինք փորձուած միջոց մը մեր տարակարծութիւնները դիւրաւ հարթելու համար. չէինք հանգչեր առանց իրարու հետ աղօթելու, եւ քանի որ քրթմնջալով ու դժգոհելով կարելի չէ աղօթել, կը լուծէինք հարցը. *probatum est* (փորձուած է)»:

Տոքթ. Քրիստին կինը թոքախտով կը հիւանդանայ, ուստի ան պէտք է մեկնի: Զինք կը փոխարինէ տոքթ. Անդրէաս Ֆիշլըր⁴³՝ կրկին




Դարմանատան «գործողութիւններու սենեակ»-ին մէջ. Եագոպ Քիւնցլեր (ծախին) զգայազերծիչ դեղ կը սրսկէ հիւանդին, տան ծառան բռնած է հիւանդին ոտքերէն, մինչ տոքթ. Քրիստ կը կատարէ վիրահատութիւնը, օգնական ունենալով հայ բժիշկ տոքթ. Աբրահամ Աղդարեաննⁱⁱ ու բուժքոյր Քամինը:

- ii Շրջանաւարտ Պէյրութի ամերիկեան համալսարանէն. Տես «Փափա...», էջ 39: Ղազարեանց կը նշէ նաեւ հետեւեալ անունները իբրեւ Ֆիշլըրի գործակից. բժիշկներ Աւետիս Ճեպեճեան, Է. Արոյեան, Ս. Մկրտիչեան, Տիգրան Գասսապեան, Ա. Ապուհայթայեան, եւ Յ./Հ. Պալեան:

43 Dr. Andreas Vischer (1877 – 1930), պազըլցի բժիշկ: 1912-ին նշանակուած է Ուրֆայի գլխաւոր վիրաբոյժ: Հայրենիք վերադառնալէն ետք ալ շարունակած է օգնել հայ տարագիրներուն: Եղած է Հայ աչազուրկ որբերու զուիցերիական նպաստամատոյցի նախագահ: Գրած է իր յուշերը *Erlebnisse eines Schweizerarztes bei den türk. Nationalisten*, (Զուիցերիացի բժիշկի յուշերը թուրք ազգայնականներու շրջանին), 1921: Թրքերէն թարգմանութիւն (2021)՝

Պազըլէն: Եագոպ Քիւնցլեր տաս տարի մեծագոյն ակնածանքով կը գործակցի անոր հետ: Բժիշկին եւ սարկաւագին ընտանիքին համար կառուցուած նոր տուները ապացոյց են, որ անոնց ներկայութիւնը որքան էական էր քաղաքին համար:



Եագոպ Քիւնցլեր իր զաւակներուն հետ տողթ. Ֆիշըրի տան առջեւ

Եագոպ Քիւնցլեր արագօրէն կը սորվի հայերէն, թրքերէն, արաբերէն, քրտերէն եւ անգլերէն: Առանց թարգմանիչի կը հաղորդակցի ամենատարբեր խաւի մարդոց հետ: Յօդուածներով կանոնաւորաբար կ'աշխատակցի “Der christliche Orient”⁴⁴ (*Քրիստոնեայ արեւելքը*) պարբերականին: Իր խորաթափանց տեսութիւնները ան կը շարադրէ յստակօրէն, վառ, կենդանի ու հակիրճ կերպով. ապշեցուցիչ շնորհք մըն է սա, որով ան օժտուած է: Սա կը բխի իր փափաքէն, որ առանց նախապաշարումի արդար

İsviçreli Bir Doktorun Türk Milliyetçileri Arasındaki Anıları, թարգմանիչ Միներաւ Եալինյար:

44 Der Christliche Orient ամսաթերթը, սկսած է լոյս տեսնել 1899-ին Լեփսիուսի Քրիստոնէական բարեգործութեան գերմանական նպաստամատոյցին (Deutschen Hilfsbund) կողմէ: Քիւնցլեր կանոնաւորաբար թղթակցութիւններ դրկած է թերթին, որոնք 2021-ին խմբագրած եւ գիրքի մէջ ամփոփած է սոյն գրքոյկի հեղինակը Berichte aus Urfa (Ձեկոյցներ Ուրֆայէն) վերնագրի տակ:

պէտք է ըլլալ ամէն վիճակի մէջ գտնուող բոլոր մարդոց հանդէպ: Ան տարիներէ կը հաւաքէ օգերելութաբանական տեղեկութիւններ: Ան գիտական ճշգրտութեամբ կը նկարագրէ զանազան հիւանդութիւններ: Ողջամիտ, ճշգրիտ դիտողութիւնները կը համաձուլուին Աստուծոյ խօսքին վստահելու անոր անյողդողդ վճռականութեան:

1908 թուականին սուլթանին գահընկէցութիւնը ներքին նոր քաղաքական կարգի մը յոյսը ներշնչեց⁴⁵: Բոլոր ազգերը պիտի ունենային հաւասար իրաւունքներ եւ պարտականութիւններ: Քիւնցլեր թերահաւատ է. կարելի է դարաւոր վարքագիծեր այդքան արագ փոխել:




Քարտեզ՝ գծուած Անդրէաս Կիկլըրի կողմէ, Հուլիս

Ուրֆայի մէջ աշխատանքը հաստատ քայլերով կ'ընդլայնուէր: 1912-ին նիւթական միջոցները գոյացան եւ յաջորդ տարին նոր հիւանդանոցի հիմնաքարը զետեղուեցաւ: Ա. Համաշխարհային պատերազմին սկսիլը չ'արտօներ, որ տոքթ. Ֆիշըր վերադառնայ իր հայրենիքէն: Չորս տարի շարունակ Քիւնցլեր առանձինն պիտի ղեկավարէր դարմանատունը:

Թուրքիա կը մասնակցի պատերազմին Գերմանիոյ կողքին: Ռուսիոյ դէմ արշաւանքը կ'աւարտի անփառունակ պարտութեամբ: Զո՛վ մեղադրել: Կ'ըսուի, թէ հայեր դասալիք եղան: Ամէն մարդ կասկածանքի տակ է ռազմաթիկունքի վրայ թշնամիին հետ գործակցելու ամբաստանութեամբ:

⁴⁵ Ակնարկութիւնը կը վերաբերի Երիտթուրքերու յեղափոխութեան եւ Օսմանեան սահմանադրութեան հռչակումին:



1913-ին նոր հիւանդանոցին հիմնարկէքը կը կատարուի քաղաքին բոլոր նշանաւոր մարդոց ներկայութեան: Եագոպ Քիւնցլեր՝ ճերմակ գլխարկով, ձախին է, ծառին տակ: (“Der Christliche Orient”)

JAKOB CRITICALLY ILL, TYPHUS. MAY 1.

KÜNZLER DOWN WITH SPOTTED FEVER, RECOVERING,
CASH EMERGENCY, JAKOB. MAY 27 1915

Two telegrams to Dr. Andreas Vischer

Երկու հեռագիր ուղղուած տոքթ. Անդրէաս Ֆիշլերի
Եագոպ ծանր հիւանդ, ժանտատենդ, մայիս 1, Քիւնցլեր
ժանտատենդը յաղթահարուած, ապաքինումի մէջ, շտապ գումարի կարիք,
Եագոպ, 27 մայիս 1915

Եագոպ Քիւնցլեր հազիւ սկսած էր ապաքինիլ ժանտատենդէ, երբ աղէտը դարձաւ ակնյայտ: Հիւսիսէն Ուրֆա կը հասնին տեղահանեալներու կարաւաններ. միայն կիներ եւ մանուկներ. այրերը արդէն սպաննուած էին: Պատահածները կարելի չէր այլեւս թաքուն պահել: Տարերային ջարդեր չէին. արդի արհեստագիտութիւնը կանխաձրագրուած սպանդի կարելիութիւն կ'ընձեռէր: Կեդրոնական հրամանատարութեան մը կողմէ համատարած կործանում մը կազմակերպուած էր հեռագրային կապի միջոցով: Նախկին Օսմանեան Կայսրութիւնը պիտի վերածուէր արդիական ազգ-պետութեան մը: Բոլոր ոչ-թուրք ազգութիւնները պէտք է բնաջնջուէին: Նախ հայերը, ապա ասորիները եւ յոյն քրիստոնեաները, եւ վերջապէս՝ քիւրտերը:

Քիւնցլեր կը հաւաքէ զեկուցագրեր, կը տեղեկացնէ Հալէպի մէջ



Ծառայ Ալինⁱⁱⁱ, որ կ'օգնէր պահուլտածներուն հոգ տանելու, մահուան դատապարտուածները արտերկիր փախցնելու, եւ որ ի հեճուկս չարչարանքի՝ ոչ ոքի մատնեց: (© Տոքթ. Ա. Ֆիշլըրի թողօնէն)

iii Ալի, շատ աղքատ, անտուն մուրացիկ մը եղած է, որուն բորբոքած սրունքը բուժած է Քիւնցլեր, եւ հետեւած՝ անոր ապաքինումին: Իբրեւ երախտագիտութիւն, ան ծառայած է հիւանդանոցին մէջ:

Գերմանիոյ հիւպատոսին, կ'արձանագրէ իր դիտարկումները եւ կը նշէ, թէ սարսափելի անարդարութեան դիմաց ինք գրեթէ անզօր է: 19 հոկտեմբեր 1915-ին Ուրֆայի հայկական թաղամասերուն ինքնապաշտպանութիւնը կը ճնշուի: Քիւնցլերի ընկերը՝ Լէսլի, ընկճուածութենէն անձնասպան կ'ըլլայ⁴⁶: Անխախտելի արիութեամբ, Քիւնցլերները կը յաջողին դարմանատունը բաց պահել եւ քանի մը հոգի փրկել: Էլիզապէթ Քիւնցլերի յարաբերութիւնները Ուրֆացի կիներու շրջանակին մէջ կ'օգնեն անոր, որ յաջողի կիներ ու մանուկներ Հալէպ փախցնել: Գործակից Քարէն Եփփէ կը յաջողի եօթը հայ այրեր պահել: Քիւնցլեր ամուլը զարմանալիօրէն կրցաւ տոկալ այդ տարիներու ծայրահեղ պրկումին ու ճնշումին՝ առանց հոգեկան հիւանդութենէ տառապելու:

Քիւնցլերները տարի մը արձակուրդ առին Պազըլի մէջ: Իրենց երկրորդ մեկնումէն ետք պարզ դարձաւ, որ Ուրֆայի մէջ աշխատանքը

46 Մանրամասն նկարագրութեան համար տես «Փափա...», էջ 86 – 91: Վեր. Ֆրանսիս Լէսլիի մահուան եւ անձնասպանութեան վարկածին կեղծ ըլլալուն մասին տես “In the Land...”, էջ 44 – 49 եւ 148-9:

«Թէեւ ծանր սրտով, բայց վերջապէս որոշեցի ձգել գործս Ուրֆայի մէջ եւ մեկնիլ Սուրիա»^{iv}, հաւատալով, որ այնտեղ եւս ես Աստուծոյ առաջնորդեալը պիտի ըլլամ:

Ուղիղ նոյն օրը, երբ 23 տարի առաջ այս երկիրը եկած էի, նոյն վայրէն անցայ Եփրատը: Սա վերջն էր սիրով ու աղօթքով լեցուն քրտնաջան աշխատանքի մը. ու՛շ էի. հաւատքը “ոչ” կ’ըսէր»:

iv Իմա՛ Լիբանան

անյոյս էր: Գրեթէ բոլոր քրիստոնեաները մեռած էին: Պետական իշխանութիւնը իսլամ թուրքերուն համար արտաքին օգնութիւն չէր ուզեր: 1 օգոստոս 1922-ին Եագոպ Քիւնցլեր կը փակէ դարմանատունը:

Երկրին մէջ մնացած քրիստոնեաները դեռ զանգուածային սպանութիւններու սպառնալիքի տակ էին: Ամերիկեան նպաստամատոյց կազմակերպութիւնը՝ Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյցը⁴⁷, կ’որոշէ քրիստոնեայ որբերը տանիլ մօտակայ ապահով երկիր մը: Հարկ էր մանուկները հաւաքել տարբեր վայրերէ, տեղական իշխանութիւններէն անոնց թուղթերը ապահովել եւ տեղափոխութիւնը կազմակերպել այնպիսի վայրերէ, ուր աւազակային ցեղախումբեր կը կողոպտէին ճամբորդները: Ո՞վ պիտի ապահով առաջնորդէր բազմաթիւ մանուկները, եթէ ոչ Եագոպ Քիւնցլերը, ո՞վ լաւատեղեակ էր երկրին մտածելակերպին եւ ծանօթներ ունէր բոլոր ազգութիւններուն մէջ: Վճռական արարքով մը, մօտաւորապէս 8000 որբեր Եփրատէն անցնելով կը բերուին Սուրիա եւ Լիբանան:⁴⁸

47 Near East Relief, ստեղծուած American Committee for Armenian and Syrian Relief (Հայկական եւ սուրիական նպաստամատոյց կոմիտէ) անունով. 1930-ին կոչուած է Near East Foundation: Ամերիկեան բարեգործական կազմակերպութիւն, հիմնուած 1915-ին, օգնելու համար հայ եւ այլազգի տարագրեալներու՝ ի հետեանք Օսմանեան կայսրութեան մէջ իրագործուած ցեղասպանական արարքներու: Առաւելաբար անմիջական օգնութեան եւ որբախնամ աշխատանք կատարած է, սակայն մեծ ներդրում ունեցած է նաեւ կրթական եւ առողջապահական մարզերու մէջ: Օրին եղած է ԱՄՆ-ի մեծագոյն ոչ-պետական մարդասիրական նախաձեռնութիւնը, օգնած ըլլալով աւելի քան մէկ միլիոն տարագրեալի (ներառեալ 130.000-է աւելի որբերու): Տես <https://neareast.org/>:

48 Այս կարելու եւ յանդուօն նախաձեռնութեան մասին մանրամասն կարելի է կարդալ «Փափա...» էջ 134 – 152, նաեւ “In the land of...”, էջ 123-128, նաեւ

Քիւնցլեր զոյգը կը ստանձնէ անոնցմէ գոյացած մօտաւորապէս հազար չորս հարիւր հոգինոց որբանոցի մը տնօրինումը: Արեան թունաւորումի պատճառով հարկ կ'ըլլայ անդամահատել Եագոպ Քիւնցլերի աջ թելը⁴⁹: «Փափա»-ն մէկ թելով հոգ կը տանի «իր զաւակներուն» բարօրութեան:



Հայ որբեր դէպի ապահով Սուրիա եւ Լիբանան

Ան ամուսին կը գտնէր չափահասներուն: Գորգագործութեան արտադրամաս մը զանոնք գործով կ'ապահովէ. գորգերէն մէկը կը հասնի Սպիտակ տուն՝ Ուաշինկթըն⁵⁰:

Երբ մանուկները այլեւս ինքնուրոյն կը դառնան, այլ ձեռնարկ մը կը մնայ: Ղազիրի մէջ այրիներու համար տուններ կը կառուցուին Զուիցերիոյ հայասէրներու միութեան⁵¹ կողմէ: Քիւնցլեր կը պայքարի մալարիայի դէմ՝ մօեղ ուտող փոքրիկ Կամպուսիա ծուկեր բուծանելով

«Եագոպ...», էջ 91 – 110:

49 Տէն «Եագոպ...», էջ 111 – 114:

50 1925-ին ԱՄՆ նախագահ Կալվին Քուլիճին ղրկուած է 23 քառակուսի մետր տարածութեամբ «Իսպահան» գորգ մը Մերձ. Արեւքի նպաստամատոյցին կողմէ, առ ի երախտագիտութիւն ամերիկացի ժողովուրդին ու ամերիկեան կառավարութեան աջակցութեան: Տէն «Փափա...», էջ 160-161, նաեւ «Եագոպ...», էջ 161 – 167, նաեւ “In the Land...”, էջ xvi – xvii եւ համապատասխան ծանօթագրութիւնները:

51 Bund schweizerischer Armenierfreunde, գործած է 1896–էն: 1916 – 1944 Պազէլի մէջ հրատարակած է Mitteilungen über Armenien (Լուրեր Հայաստանի մասին) եռամսեայ պարբերականը: մինչեւ 1921 եղած է Լեփսիուսի Deutschen Hilfsbund-ի մէկ մասը, որմէ ետք գործած է անկախ՝ մինչեւ 1960-ականները, սատար հանդիսանալով Քիւնցլերի հիմնած հաստատութիւններուն:



Մէկ թելով «Փափա»-ն (© Ընտանեկան արխիւ)

լճակներու մէջ: Անոր օգտակարութիւններուն պսակումը կ'ըլլայ Լիբանանի մէջ հայկական առողջարանի մը շինութիւնը: Դէպի ԱՄՆ կատարած անոր ուղեւորութիւնը, նուիրահաւաքի նպատակով,



Եագոյ Բիւնցլեր եւ հայ որբուհի մը կը հիւսեն Ուաշինկթընի Սպիտակ տան գորգը:

ակնկալուած արդիւնքը չի տար⁵²: Զուիցերիոյ մէջ անոր հաւատարիմ բարեկամները կարելի կը դարձնեն առողջարանին շինութիւնը: 1947-ին

52 Այս ճամբորդութեան մասին տես «Փափա...», էջ 180 – 183:

իր կեանքի աշխատանքը կը գնահատուի. Պազըլի համալսարանի բժշկական բաժանմունքը իրեն կը շնորհէ «Պատուոյ բժշկութեան դոկտոր»-ի կոչում:

15 յունուար 1949-ին Եագոպ Քիւնցլեր կը մահանայ Ղազիրի մէջ, շրջապատուած իր ընկերներով: Երկու օր ետք սգաւորներու մեծ բազմութիւն մը հրաժեշտ կու տայ իր դագաղին Պէյրութի մէջ⁵³: Տաս



Էլիզապէթ Քիւնցլեր Պենտէր՝ 90 տարեկան

տարի ետք, 22 փետրուար 1959-ին, իր ծննդավայրին՝ Հունտվիլի մէջ յուշատախտակ մը կը դրուի կնոջ՝ Էլիզապէթի ներկայութեան, որ կը մահանայ ինը տարի ետք՝ 92 տարեկանին:



53 Քիւնցլեր թաղուած է Ֆրանսական աւետարանական եկեղեցւոյ գերեզմանատան մէջ, Պէյրութ, Rue Damas:

1912-ին դրամ հաւաքուեցաւ Ուրֆայի մէջ նոր դարմանատուն մը կառուցելու համար: Այդ նպատակով *Քրիստոնեայ արեւելքը* ամսագիրին մէջ լուսանկարներ հրատարակուեցան Եագոպ Քիւնցլերի լուսաբանութիւններով, որոնց կենդանի եւ հակիրճ ոճը ապացոյց է սարկաւագին սուր միտքին ու անվերապահ սիրոյն, եւ որոնք լաւապէս կը պատկերեն դարմանատան առօրեան ու պայմանները:

**«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որովհետեւ իմ
այս փոքր եղբայրներէս մէկուն ըրիք,
ինծի ըրած եղաք»**

Աւետարան ըստ Մատթէոսի 25:40



Մեր քյորերը

Տեղացի մեր քյորերուն թիւը շատոնց արդէն հասած է հինգի:

Գլխաւոր բուժքոյրը Աննան է [աջէն առաջինը], վստահելի, լուռ, աշխատասէր եւ շատ կարեկից քրիստոնեայ մը: Ան կանգնած է նկարին ծայր աջը: Արդէն տասնմէկ տարուայ հիւանդանոցային ծառայութեան փորձ ունի:

Անոր քով կանգնած է քոյր Ովսաննան՝ դուստրը բողոքական եկեղեցւոյ սարկաւագին, որ մահացաւ մեր հիւանդանոցին մէջ արեան թունաւորումէ: Ան նոյնպէս մեր հետ կ'աշխատի հինգ տարիէ ի վեր, շատ գործուն է եւ հիւանդներուն հանդէպ շատ սիրալիր:

Նկարին մէջտեղը փոքրամարմին քոյր Գուտցին է, որ մեզի հետ է 1909-էն ի վեր: Անոր բնաւորութիւնը քաշողականութիւն մը ունի հիւանդներուն համար. ան գիտէ ինչպէս վարուիլ հիւանդներուն հետ, միշտ ուրախ եւ զուարթ է: Երբ նոր սկսած էր աշխատանքի, կը թուէր թէ պիտի չկարենար բաւարար արդիւնք տալ: Քիչ մը անճարակ էր եւ երբ շատ անուններ հարկ ըլլար յիշել՝ դէմքը կը ծամաճռէր, բայց հիմա բոլորովին այլ էակ մըն է. արագաշարժ, ուշադիր եւ գթասիրտ: Քիչ մը շատ յանդուգն է: Արդէն տարի մըն է, որ առողջութիւնը լաւ չէ, պէտք է հոգ տարուի իրեն, բայց այդ ալ կարելի է միայն զինք զսպելով:

Ռփսոմ կամ Հոռոմ⁵⁴, ինչպես կրճատ կը կոչենք զինք, չորրորդ քրոջ անունն է: Ան ամենաերիտասարդն է, հազի քսան տարեկան. գրեթե երկու տարիէ մեր հետ կ'աշխատի: Բնաւորութիւնը շատ հաճոյ է հիւանդներուն համար, թէեւ գիտելիքի եւ փորձառութեան առումով միւսներէն բաւական ետ է: Իսկական թուրքերուն մեծ մասը առանց վաւաշոտ հայեացքի չի կրնար նայիլ չճաճկուած կին արարածներու, իսկ քանի որ քոյր Հոռոմը, ըստ արեւելեան ճաշակի, գեղեցկուիի է, թուրք հիւանդները շարունակ անպատշաճ ակնարկութիւններ կը կատարեն: Ուստի, այսպիսի հիւանդներու հանդէպ խիստ կեցուածք պէտք է որդեգրէի:

Ամենանորը, որ ամիսներէ ի վեր մեզի միացած է, քոյր Խաթունն է: Ան նախապէս հիւանդ էր մեր քով՝ ականջի բորբոքումով. հիւանդութեան ընթացքին որոշեց բուժքոյր ըլլալ, արձանագրուեցաւ, եւ երբ մէկու մը պէտք ունենայինք, կը վարձէինք զինք: Ան նոյնպէս լաւատես ըլլալու պատճառ ունի: Ամռան արձակուրդներէն առաջ աչքի մանրախտի (տրախոմա) գործողութեան պիտի ենթարկուի:

Այս հինգ քոյրերէն միայն Խաթունը հայ առաքելական է. միւս բոլորը բողոքական դաստիարակութիւն ունին: Թող Աստուած օրինէ այս քոյրերուն աշխատանքը մեր երկրի ժողովուրդին համար:

54 Հռիփսիմէ անուան կրճատումը



Հիանդասենեակի մը մէջ

Այս նկարին մէջ հետաքրքիր դիտողները քիչ բան կը տեսնեն: Եթէ ուշադիր նայիք, հազիւ երեք հիւանդի գլուխ կը տեսնէք: Մեր հիւանդասենեակները շատ փոքր եւ խճողուած են, եւ պատշաճ կերպով զանոնք լուսանկարներով չենք կրնար պատկերել:

Այս լուսանկարահանումին ատեն սենեակին մէջ ինը հիւանդ կար:

Նկարին մէջտեղի հիւանդը ծալովի անկողինի վրայ է, որովհետեւ սենեակին մէջ միայն ութ մահճակալ կայ: Երբ նեղուածք ըլլայ, ծալովի անկողինի մը չափ տեղ կը բացուի եւ իններորդ հիւանդը հոն կը տեղաւորուի:

Մահճակալներէն մէկուն կը տեսնէք թելով կախուած ծանրութիւն մը, որ քսան քիլօ է, եւ կապուած է արաբի մը ոտքին, որ փշրուած էր փամփշտահարութենէ՝ արշալի մը ընթացքին:

Հաւանա սիկարներու տուփը, որ այդքան գեղեցկօրէն կ'երեւի նկարին մէջ, թող չմոլորեցնէ դիտողը, թէ մենք Հաւանա սիկար կը ծխենք. ոչ, այդ պարզապէս ջերմաչափերու տուփն է:

Սեղանին վրայի գեղեցիկ ջրամանը նուրբ կ'երեւի: Ան ծակոտկէն է, ուստի ըմպելի ջուրը անոր մէջ միշտ պաղ կը մնայ:

Անոր քով գտնուող փսխանօթը, ճիշդ ենթադրութեամբ կը նշանակէ, որ հոն պառկած է գործողութենէ նոր ելած հիւանդ մը, որ տակաւին քլորոֆորմի ազդեցութեան տակ է:



Հիւանդանոցին հիւանդները

Մէկ լուսանկարի մէջ այսքան շատ հիւանդ ներկայացնելը հազուադէպ կ'ըլլայ մեր հիւանդանոցին մէջ: Երբ հիւանդ մը հագիւ կարենայ նորէն ոտքի ելլել, ընդհանրապէս պէտք է ձգէ հիւանդանոցը, որպէսզի նոր հիւանդի մը տրամադրուի անոր մահճակալը:

Հետեւաբար, քիչ կը պատահի, որ այսքան մեծաթիւ ոչ-անկողնային հիւանդներ ըլլան, ինչպէս որ կ'երեւի նկարին մէջ: Յերեկային չորս բուժքոյրերն ալ ուզեցին ըլլալ նկարին մէջ, խումբը աւելի մեծ ցոյց տալու համար:

Միսիոնարութեան բարեկամը վստահ եմ համբերութեամբ պիտի հետեւի ինծի, երբ մի առ մի իրեն ներկայացնեմ հիւանդները:



Լուսանկարի աջին քիւրտ Ռամատանն է՝ նստած ամենէն ծայրը, վիրակապուած աչքով: Ան եկած է Սեւերէկէն⁵⁵, որ երկու օր հեռու գտնուող փոքր քաղաք մըն է: Երբ եկաւ, երկու աչքերն ալ կուրցած էին: Նախ աջ աչքը վիրահատուեցաւ, բայց ափսոս՝ անյաջող էր: Աղօթքով եւ ուշադրութեամբ,

55 Քաղաք Տիարպէքիի նահանգի նոյնանուն գաւառին մէջ:

սկսան վիրահատել միւսը: Փառք Աստուծոյ, յաջողեցանք եւ խեղճ մարդը գէթ մէկ աչքով նորէն կրնայ տեսնել:



Անոր քովը նստած է քրիստոնեայ կին մը: Ան ալ վիրակապուած աչք մը ունի: Անոր միակ աչքին մէջ չարորակ խոց մը գոյացած էր, որ կը սպառնար կուրցնել զայն: Այս պարագային ալ, փառք Աստուծոյ, երկարատեւ եւ ծախսալից հոգածութեամբ կարելի եղաւ փրկել թանկագին միակ աչքը այս խեղճ կնոջ, որ երեք անչափահաս զաւակներու մայր է:

Այս կնոջ քովը նստած է քրիստոնեայ աղջիկ մը, որ կու գայ երկու օրուայ հեռաւորութեան վրայ գտնուող Ատիամանէն: Նախ վիրահատուեցան անոր կոպերը, ապա հարկ եղաւ հեռացնել անոր ուռած փայծաղը, որ անտանելի կը ցաւէր: Սա տողերը գրելու ատեն, ան արդէն բուժուած կը նկատուի:



Աղջկան ետին կանգնած է Տիարպէքիրի⁵⁶ մեր բուժարանի⁵⁷ նախկին աղախիններէն մին: Զինք վիրահատեցինք քաղցկեղային ուռուցքի մը պատճառով: Երկար գիսակներուն մասին, մենք կատակով կ'ըսենք, որ այս երկրի քաղաքաբնակ կիներն ալ կը սիրեն երեւիլ երկար հիւսքերով: Եթէ չկարենան իրենք անձամբ երկարել իրենց մազերը, ինչպէս այստեղ, ուրիշներու հիւսքը կը հասնի օգնութեան:

Ատիամանցի աղջկան քով նստած է մութ ակնոցով ուրախ հիւանդ մը: Ան տարեց թրքուհի մըն է Սեւերէկէն: Անոր հրճուանքին պատճառը զոյգ աչքերն են, որոնք ակնաքօղի (քաթարաքթի) պատճառով կուրցած էին, բայց հիմա, շնորհիւ գործողութեան, վերագտած են իրենց տեսողութիւնը:



56 Քաղաք նոյնանուն նահանգին մէջ: Պատմական Հայաստանի Ամիդ շրջանը:

57 Տիարպէքիրի մէջ բուժարանի մասին տեղեկութիւն չգտանք. Այնտեղ միութիւնը վարած է որբանոց, որ փակուած է 1900-ին նիւթական պատճառով:



Քովը նստողը կին մըն է Մարտինէն⁵⁸ Ուրֆայէն չորս օր հեռու քաղաք մը: Գրկինը իր զաւակն է: Հիւանդը կինը չէ, այլ մանուկը, որուն միզապարկէն քար հանուեցաւ: Մանկիկը այնքան սակաւարիւն եւ փքուած էր, որ կը վախնայինք, թէ գործողութենէն ողջ չ'ելլեր, բայց ան շատ լաւ բուժուեցաւ, հակառակ այն փոքրիկ ամրակազմ տղուն, որ նոյն օրը վիրահատուեցաւ երիկամային քարի պատճառով, եւ որուն մասին կ'ըսէինք, թէ կը դիմանայ գործողութեան, բայց մահացաւ երկու օր ետք: Երբեմն այսպէս կը պատահի. ինչ որ թոյլ կը թուի, ամուր է, եւ ինչ որ զօրաւոր կ'ենթադրուի, կը տկարանայ:

Մանուկին անկողինին դիմաց պազած, մտազբաղ մօրութաւոր մարդ մը կայ, որ նոյնիսկ վիրակապերով՝ սաստիկ մտահոգ կ'երեւի: Նախապէս նկարագրուած Ռամատանին չի նմանիր: Անոր եղբայրն է՝ Ալին, որ նոյնպէս աչքի գործողութեան ենթարկուեցաւ: Տակաւին ցաւի մէջ է աչքի կեղի պատճառով, որ գոյացաւ վիրահատութենէն ետք:



Անոր եւ փոքրիկին ետին կանգնած է հիւանդ Մուստաֆա-Մանէրը, որ վճարովի հիւանդ է⁵⁹:

Ով որ այս երկրին անուններուն ծանօթ է, անմիջապէս պիտի նկատէ, որ գործ ունինք մարդու մը հետ, որ իսլամ եւ քրիստոնեայ զոյգ անուն ունի, որ ինքնին շատ տարօրինակ է: Անշուշտ սա իր անունն է քրիստոնեաներուն մէջ: Իր մկրտութեան անունը Մանուկ է, կրճատ՝ Մանէր: 1895-ի սարսափելի ջարդերուն Մանէր իսլամական գիւղի մը միակ քրիստոնեան էր: Ան պէտք է որոշէր. կամ մեռնիլ, կամ իսլամանալ: Այլ քրիստոնեաներու նման, ան կը կարծէր, թէ մեռնելու քաջութիւնը ունէր, բայց երիտասարդ կինն ու քանի մը զաւակները արցունքներով կը պաղատին ու կը համոզէն իրեն, որ չմեռնի: Ուստի կ'իսլամանայ եւ կը վերանուանուի Մուստաֆա: Իսլամացումի պահը իր կեանքի ամէնէն խաւար ժամը 58 Քաղաք Տիարպէքիի նահանգի նոյնանուն գաւառին մէջ:

59 Իտա կը վկայէ «Շատ քիչեր կրնային լրիւ վճարում կատարել, ոմանք մասամբ կը վճարէին: Մեծամասնութիւնը հիւանդներուն ոչինչ կը վճարէր». ձրի տրուած է նաեւ դեղորայքը: « Տէս «Փափա...», էջ 43 եւ 47:

կը սեպէ Մանէր: Ջարդերէն ետք, թրքական կառավարութիւնը, [Եւրոպական] ուժերուն պնդումով, կը ստիպուի համաներում շնորհել բոլոր իսլամացած քրիստոնեաներուն, անոնց կրկին քրիստոնէութեան դառնալու իրաւունք տալով: Մանէր անմիջապէս կը վերընդունի իր նախկին կրօնքը, զոր ներքնապէս՝ սրտին մէջ, միշտ պահպանած էր: Բայց քրիստոնեաները կառչած մնացին Մուստաֆային, ի նշան ճանաչումի:

Ի պատիւ շատ քրիստոնեաներու, պէտք է ըսել, որ անոնք չարդարացուցին Մանէրի արարքը: Անոցմէ հազարաւորներ նմանատիպ ընտրանքի դիմաց էին. անոնք ալ կին ու զաւակ ունէին, բայց քաջաբար նախընտրեցին մեռնիլ, քան ուրանալ իրենց քրիստոնեայ հաւատքը:

Ինչու՞ հիւանդանոց եկած էր: Ան կը տառապէր մորթային հիւանդութենէ՝ տապասկէ⁶⁰, որուն հետեւանքով իր մարմնին մեծ մասը ամբողջովին կը մեռնէր: Այս հիւանդութենէն մեռնելու մօտ էր, բայց ապրելու նոր առիթ տրուած էր իրեն: Սակայն այդ ընդարձակ, մորթագուրկ բաժինները կրկին առողջ մորթով պատուաստելու համար, բժշկական հմտութեան եւ արհեստագիտութեան հրաշքը անհրաժեշտ էր: Եւ յաջողեցանք: Այդ է պատճառը, որ Մուստաֆա-Մանէրը այդքան գոհունակ կ'երեւի նկարին մէջ:



Մահիճին մէջ պառկած տղեկը հայ Օհաննէսն է: Երեք ամիսէ ան ճրիաբար կը բուժուի մեր քով: Անոր ոլոքը ամբողջովին փճացած է: Նորի մը աճումը երկար ժամանակի կը կարօտի: Ան հաւանաբար գերմացի խաչակիրի յետին շառաւիղ է, որովհետեւ կապուտաչուի եւ շիկահեր է: Ձեռին ունի պատկերագիրք մը: Բան մը պիտի խնդրեմ ձեզմէ: Հիւանդանոցին մէջ պատկերագիրքերու պակաս ունինք: Այրեր, մեծեր ու փոքրեր հաճոյքով եւ ուրախութեամբ կը դիտեն զանոնք: Հազուագիւտ են գրաճանաչները, ուստի պատկերագիրքերը ժամանցի լաւ միջոց են: Ո՞վ մեր հիւանդներուն պատկերագիրք պիտի հայթայթէ:

60 Օճախտ, Shingles



Անթացուպերով մարդը քիւրտ Իպրահիմն է, Սեւերէկէն: Հիւանդ մը, որ ամէն անգամ երբ զիս տեսնէ, պատկերագիրք կ'ուզէ: Փամփշտահարումի հետեւանքով ոտնաթաթի խեղում ունէր, որ բժիշկը կրցաւ ուղղել:

Անոր ետին գտնուող ծերունին ուրֆացի քրիստոնեայ մըն է: Ան ապաքինուած էր գործողութենէ մը, որ կատարած էինք այստեղ, բայց անոր գունատութիւնը թաքուն վատառողջութեան մը ախտանշանն է:



Անոր կողքին, քիչ մը կռացած կանգնողը ոսկերիչ Էլիասն է՝ Չունքուշէն⁶¹, որ հինգ օր ճամբորդութենէ ետք հասաւ: Տարիներէ ի վեր ոչ մէկ գործ կրցած է ընել ջղացաւի պատճառով, բայց այստեղ կրցաւ բուժուիլ: Տուն վերադառնալով, ան ամէն կողմ գոված է բժիշկին վարպետութիւնը, հետեւաբար, այդ շրջանէն հիւանդներու ամբողջ կարաւան մը եկաւ Ուրֆա:

Սեւերէկէն բողոքական երիտասարդ մը նստած է եռաստիճան ոտնդիրի մը վրայ: Ան հիւանդանոց ընդունուեցաւ ոտքի հիւծախտի պատճառով: Կը բուժուի: Կասկածելի է, որովհետեւ հիւծախտը ընդհանրապէս իր զոհերուն չի խնայեր: Ան գրաճանաչ է, ուստի իր չարչարանքի ժամերը կ'անցընէ առաւելաբար Աստուածաշունչ կարդալով:



Ո՛վ շնորհակալ չ'ըլլար Աստուծմէ երբ առողջ է եւ կը նայի հիւանդանոցային հիւանդներու նկարին ուր ինք չկայ: Ո՛վ կ'ուզէ յիշել տառապեալները եւ օգնել մեզի որ հոգ տանինք ոչինչ ունեցող աղքատներու:

61 Կամ Չնքուշ, գիւղ եւ գաւառակ Տիարպէքիի նահանգին մէջ:



Դարմանատան առաւօտը

Իսայտաբղէտ նկար մը կազմուած է: Մեծ ու փոքր, երիտասարդ եւ տարեց, հարուստ եւ աղքատ, քրիստոնեայ եւ իսլամ՝ բոլորը, որոնք առաւօտուն կը մէկտեղուին հիւանդանոցին մէջ դարմանումի համար:

Նկարին մէջ մօտաւորապէս հարիւր հոգի կը հաշուէք: Սակայն ընդհանրապէս ասոնք երկու բակերու եւ երկու սպասման սրահներու մէջ կը տեղաւորուին: Հիւանդներ, որոնք կու գան վիրակապումի⁶² կամ աչքի դարմանումի, եւ անոնք, որոնք նոր քննութեան համար կու գան, կը տեղաւորուին զատ սենեակներու մէջ: Ամէն տարի, ապրիլ, մայիս եւ յունիս ամիսներուն հիւանդներու հոսանք մը կը սկսի, եւ մենք հազիւ կրնանք գործը աւարտել:

Նոր կառուցուելիք հիւանդանոցին մէջ հարկ է որ ունենանք ընդարձակ սպասման սրահ մը, ուր բոլոր հիւանդները կարենան տեղաւորուիլ եւ ունկնդրել Աստուծոյ խօսքը, որ կ'ընթերցուի իրենց ամէն բուժական աշխատանքէ առաջ: Յարդ այդ սենեակները շատ փոքր ու բացօթեայ են, չկայ յարդարանք, որ սպասումը հաճելի դառնայ: Կը յուսանք որ այս ամէնը պիտի բարելաւուի նոր հիւանդանոցին մէջ:

62 Պէտք է հասկնալ նաեւ յետվիրաբուժական խնամքի իմաստով:



Հիանդ մը կը քննուի

Մեր քննութեան սենեակը փոքր է: Քանի որ նաեւ տարրալուծարան է, շատ խճողուած կ'ըլլայ: Սա պէտք է բարելաւուի նոր հիւանդանոցին մէջ:

Մահճակալին նստած է հիւանդ թուրք մը Սեւերէկէն: Կօշիկները հանած է, քանի որ արգիլուած է սպիտակ անկողինը անոնցմով ցեխոտել: Տոքթ. Ֆիշըր կը քննէ անոր զարկերակը եւ կ'ունկնդրէ անոր հիւանդութեան մասին, որ մարդը կը պատմէ: Ոտքի կանգնած անձը մեր ծերունի ծառան է, Միրզա Աբրահամը, որ դարմանումի օրերուն ի հարկին թարգմանիչ կ'ըլլայ, նաեւ կ'օգնէ հիւանդներուն հանուելու եւ հագուելու: Միրզա Աբրահամ մօտ ատենէն հանգստեան պիտի կոչուի: Աւելի գործ չենք կրնար ակնկալել իրմէ: Իր միւս գլխաւոր գործը վիրակապ ոլորելն է. ան վիրակապի մեր մատակարարն է:

Գեղեցիկ քննութեան սենեակով մը չենք կրնար հպարտանալ, սակայն տարին միջին հաշուով հինգ հազար հոգի այստեղ կ'ենթարկուի բժշկական քննութեան: Նոր հիւանդանոցին մէջ կ'ուզենք սենեակը յարդարել գեղեցիկ նկարներով՝ այդ նպատակով:



Խումբ մը քիւրտ հիւանդներ

Բաւական զուարճալի պատկեր մը: Գիւղացի եւ քաղաքաբնակ քիւրտեր, որոնք իրարմէ կը զանազանուին իրենց հագուածքով:

Աջին կանգնող երկու այրերը եւ ձախի նստածը քաղաքաբնակ քիւրտ են, իսկ ձախին կանգնածը եւ մոխրագոյն մօրուքովը՝ գիւղացի: Բաց գոյն քօղ կրող կիները, որոնց դէմքը քիչ մը կ'երեւի՝ քաղաքաբնակ են՝ «պաճերի» (քրտերէնով), իսկ մութ գոյն հագուստ հագածները՝ «կունտի» են, այսինքն գեղջկուհիներ:

Փոքրերուն մէջ դժուար է զանազանել ով պաճերի է, ով՝ կունտի: Թերեւս պաճերիները աղտոտ են, իսկ կունտիները՝ ալ աւելի: Նկարին մէջ ձախէն երկրորդ պզտիկը գիւղէն է, միւսները քաղաքաբնակ են:

Ծեր քիւրտը ակնածելի կերպարանք մը չունի: Եթէ անոր երոպական հագուստ հագցնենք, գլխուն ալ բարձր գլխարկ մը դնենք հաստ թուրպանին տեղ, ապա մեր դիմաց կ'ունենանք ապշեցուցիչ դիմարտայայտութեամբ ուսուցչապետ մը կամ պատկառելի հոգեւոր հովիւ մը:

Կասկածէ վեր է, որ քիւրտերը կրնան տակաւին բարեփոխուիլ եթէ լաւ դպրոցներ եւ հոգեւոր կրթութեան համար աւելի լաւ կրօն մը ունենան, քան իսլամը:



Դեղարանին մէջ

Մեր դեղարանն ալ այդքան դիւրութեամբ, մէկ լուսանկարով ներկայացուող վայր մը չէ: Կամարակապ շէնք մըն է, ծմեռները բաւական խոնաւ, որուն պատճառով կարգ մը դեղեր կրնան փճանալ: Ուրեմն դեղարանն ալ օգնութիւն կը խնդրէ աւելի լաւ տեղանքի մը յոյսով, որ նոր հիւանդանոցի կառուցումն է:

Մեր դեղագործ Աբրահամը, որ ժրաջան աշխատող մըն է եւ մեզի հետ է մեր բժշկական առաքելութեան սկիզբէն ի վեր, սկսած է ծերանալ, որ յայտնի կ'ըլլայ անոր ճերմկող մազերէն:

Ինք միայն դեղարանին մէջ չ'աշխատիր, ուր Յովսէփ անունով կարող օգնական մը ունի իր կողքին. ան նաեւ ամենօրեայ գործողութիւններու ժամանակ վիրաբուժին օգնականն է: Արդէն երեք չափահաս զաւակ ունի, երեք հաստ ալ՝ աւելի փոքր: Աստուած զինք պահէ մեր եւ իր ընտանիքին հետ երկար ժամանակ:

**«Որովհետեւ Յիսուս Քրիստոսի հաւատալով՝ բոլորդ
ալ Աստուծոյ որդիներ եղաք»:**

Թուղթ առ գաղատացիս, 3:26

**«...Եւ աստուածներու պէս պիտի ըլլաք՝ բարին ու չարը
գիտնալով»:**

Գիրք ծննդոց, 3:5

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Պատմական դէպքեր

1871 մարտ 8 – Ծնունդ՝ Ռոթուս, Հունստվիլ

1872 – Ընտանիքը կը տեղափոխուի Թէոյֆըն

1877 նոյեմբեր 3 – Հայրը կը մահանայ

Կը յաճախէ դպրոց եւ իբրեւ մանորդ կ'աշխատի

1878/79 – Կ'ապրի ազգականներու հետ Շթայն ԱՐ եւ Վոլֆհալտէն

1880 – Կը վերադառնայ մօր քով՝ Թէոյֆըն

1882 հոկտեմբեր 11 – Մայրը կը հիւանդանայ եւ կը մահանայ

1888, Զատիկ – Հաղորդական անդամակցութիւն, Շթայն

Հիւանի աշկերտութիւն

1891-ի ամառէն սկսեալ – Մասնագիտական գործունէութիւն կը ծաւալէ
Պազըլի մէջ

1893/94 – Կը մարզուի իբրեւ սարկաւազ (բութակ)

1895 – Հայոց վրայ գործադրուած ջարդերը

Կ'աշխատի Պազըլի քաղաքացիական հիւանդանոցին (Bürgerspital)
մէջ

1899 – Կը նշանակուի Ուրֆայի (այժմու Շանլիուրֆա, Թուրքիա)
դարմանատան բութակ

1903 – Սուրիական բողոքական վարժարանի հիմնում

1903 եւ 1909 – Արձակուրդ կ’առնէ Շթայնի մէջ (Ափփընցել Աուսըրհոտըն)

1905 նոյեմբեր 7 – Կ’ամուսնանայ Էլիզապէթ Պենտերի հետ

1908 – Կը հռչակուի թրքական ազգ-պետութիւնը, ուր բոլորին կը տրուին ընդհանուր քաղաքացիական եւ զինուորական ծառայութեան իրաւունքներ

1909 – Արանայի ջարդը

1913 – Ուրֆայի մէջ կը կառուցուին բժիշկին եւ սարկաւագին տուները

1914 օգոստոս – Երոպական մեծ ուժերը պատերազմ կը յայտարարեն. Թուրքիա պատերազմին կը մասնակցի Գերմանիոյ կողքին

1914 աշուն – Բժշկական խնամք երկու պարսիկ իշխանի⁶³

1915 ապրիլ – Ժանտատենդէ սուր վարակում

1915/16 – Զանգուածային տեղահանութիւն եւ սպանդ Ուրֆայի հայոց ապստամբութիւնը եւ անձնաւորութիւն

1915 հոկտեմբեր 30 – Ընկերոջ՝ Ֆ. Հ. Լէսլիի մահը՝ ընկճուածութենէ

1915 – 1918 – Քաղաքացիներու եւ զինուորներու ինքնայօժար եւ տքնաջան բժշկական խնամատարութիւն

1918 հոկտեմբեր 30 – Զինադադար

1919/20 – Տուն մեկնում արձակուրդի, Պազըլ

1920 – Վերադարձ Ուրֆա

1921/23 – Աթաթուրքի յաջող յեղաշրջումը

Յոյներու, ասորիներու եւ քիւրտերու ջարդեր

1921/22 – Ուր իսկար որբերու ազատումը դէպի Սուրիա

1922 հոկտեմբեր 1 – Ուրֆայի դարմանատան փակումը

1923 – Ղազիրի (Լիբանան) որբանոցի տնօրինումը (Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյց)

1923 ապրիլ – Աջ ձեռքի անդամահատումը արեան թունաւորումի պատճառով

Գորգագործութեան արտադրամասի հիմնում

63 Մանրամասն տե՛ս “In the Land of..”, էջ 7 – 9, նաեւ «Եագոպ...», էջ 64 – 67:

1925 – Ուաշինգթոնի Սպիտակ տան գորգի ուղարկում

«Արժանեաց կարգ»-ի շքանշանի ստացում Լիբանանի նախագահին կողմէ

1931 – Որբանոցի փակում, մեկնում տուն, դասախօսություններ

1932 – Զուիցերիոյ հայասերներու միութեան կողմէ ծառայութիւն Պէյրութի մէջ. մանկամսուր, ապուրի խոհանոց, խորհրդատուական կեդրոն, Պէյրութի մէջ հայ այրիներու տուններ

Կամպուսիա ծուկով մալարիայի դէմ պայքար

1935/36 - «մասնագէտ մուրացիկ». ԱՄՆ-ի մէջ դասախօսական շրջապտոյտ

1938 – Ազունիէի մէջ հայկական առողջարանի բացում

1938 – Մեկնում տուն՝ Զուիցերիա

1939 – 1945 – Երկրորդ համաշխարհային պատերազմ

1947 նոյեմբեր 22 – Պազըլի համալսարանէն «Պատուոյ բժշկութեան դոկտոր»-ի կոչումի շնորհում

1949 յունուար 15 – Մահ՝ Ղազիրի մէջ

1949 յունուար 17 – Թաղում՝ Պէյրութի մէջ

1968 յունուար 17 – Կնոջ՝ Էլիզապէթի մահը⁶⁴

64 Տէս «Փափա...», էջ 188-189:

Արդէն զգալի է Քիւնցլերի օգտակար ձեռքը դարմանատան մէջ. ան ինքնին շատ ուրախ եւ բարձր տրամադրութեան մէջ է. նոյնիսկ կենսուրախ Ափփընցել ետտըլ մը կը հնչարկէ, որ այս լքուած ու աներգ երկրին մէջ լաւ բան մըն է:

Տոքթ. Հերման Քրիստ, 23 դեկտ. 1899

Շանտ, շանտ զարմանալի է, որ պարոն Քիւնցլեր այս ամբողջ ժամանակը դիմացաւ: Ան ամուր ջիղեր եւ ուրախ բնատրութիւն ունի, սակայն ի վերջոյ, [իր կրածները] կարծես շատ էին իրեն համար: Տեղահանութիւններուն պատճառած համաճարակները, որոնք տարածուեցան մեր քաղաքին մէջ, անչափելիօրէն շատցան: Ամէն ինչ պէտք է ընենք անոր ամէն բանով օգնելու:

Քարէն Եփփէ, *Քրիստոնեայ արեւելքը*, 1919

Պէտք է տեսնել Քիւնցլերը՝ որբերու հայր եւ արտադրամասի տնօրէն: Քեզի պիտի թուի, թէ չորս թեւ ունի, ոչ թէ միայն ձախը: Սիրով մի քանի շաբաթ կը մնամ Քիւնցլերներուն հետ, որովհետեւ այդպիսի մարդոց հետ ըլլալը շատ աւելի հաճելի է, քան ամէնէն գեղեցիկ բնապատկերը:

Փրոֆ. դոկտ. Վիլհելմ Ֆիշեր, 1924

Ուրկէ՞ գտար դժբախտներուն, որբերուն եւ մուրացիկներուն հանդէպ այսքան անսպառ սէր: Այսքան ֆիզիքական եւ բարոյական այլանդակութեան մէջ այդ ժպիտը ինչպէ՞ս կրնաս պահել: Ինչը օգնեց քեզի յարատեւելու. քու անսասան հաւատքիդ արմատները, որոնք խարսխուած են հոգիիդ խորքը, ինչպէս Երոպայի սրտին մէջ մխրճուած զուիցերիական լեռները: Այս ողջ թշուառութեան մէջ քու աչքերդ տեսան մեր օրինեալ Փրկիչը, որ կ'ըսէ. «...*Որովհետեւ իմ այս փոքր եղբայրներէս մէկուն ըրիք, ինծի ըրած եղաք*»:

Հայր Պօղոս Արիս, յուլարկաւորութեան ընթացքին, 17 Յունուար 1947

Եթէ Ալպերթ Շվայցլերը կրթութեան մարդն է, Եագոպ Քիւնցլերը ճերմակազգեստ սարկաւազն է, որուն տրուած էր գործելու շնորհքը, որով ինք կը դասուի մեր ժամանակներու մեծագոյն սիրողներու շարքին: Այսպիսի ցնծալի բուժօգնութիւն ուրիշ ու՞ր ցուցաբերուած եւ ապրուած է ամբողջ կեանք մը, ու՞ր կը գտնէք այնքան ցնծագին

տքնանք, որ աղտը, թարախը, արինը, գարշահոտությունը, կղկղանքը, քրտինքը, արցունքը, անհամբերությունը, ապերախտությունը, ճիչը եւ յուսահատությունը կը պատճառեն հիւանդին խնամողին:

Փօլ Շուլց, 1967

Փափային խոր, անսակարկ հաւատքը աղբիւրն էր անոր երջանկութեան, որ կը ճառագայթէր իրմէ ու կը ջերմացնէր եւ կը հիացնէր իրեն առնչուող բոլոր մարդիկը: Հաւատքը զինք կը զօրացնէր վտանգի ու ողբերգութեան դիմաց, որոնք ինք կը հաւատար, թէ Աստուծոյ կամքն էին:

Իտա Ալամուտտին, 1970

Իր ձեռներէցութեամբ եւ վստահելիութեամբ Քիւնցլեր պատճենն է գործունեայ իտէալիստ եւ հրապարակագիր Լէփսիուսի: Քիւնցլեր ալ շնորհալի գրող էր: Անոր կարողութիւնը կը կայանար սեփական փորձառութիւններու անմիջական պատկերումին մէջ, որուն նշանակութիւնը անձնական նեղ սահմաններէ դուրս ելաւ: Իբրեւ հաղորդական անձ, ան կապի մէջ մնաց մարդկային տարբեր խումբերու հետ: Մօտիկ բարեկամներ ունէր քիւրտ, թուրք, արաբ, քրիստոնեայ սուրիացի եւ անշուշտ հայ շրջանակներէ:

Հանս-Լուրաս Քիզլըր, 1999

Ուրֆայի մէջ՝ հարաւ-արեւելեան Անատոլիոյ հարաւը, Քիւնցլեր եւ կինը շարունակեցին իրենց գործը ցեղասպանութեան ընթացքին եւ ապշեցուցիչ սթափութեամբ դիտեցին իրենց ի գործ դրած իտէալներուն անհետացումը պատմական սարսափելի պատահարներու հետեւանքով:

Փիլիսոփայութեան դոկտոր Մանֆրէտ Յիւֆլը, 1999

Քիւնցլերի գրութեան ոճը զուսպ է, անոր արձակը համեստ է, իսկ անոնցմէ բխող սարսափի եւ ողբերգութեան յարատեւ կրկնումը շատ անհանգստացնող: Անոր գիրքը խտացած աւանդն է ամէնէն աննպաստ պայմաններու մէջ մարդոց կեանքը փրկելու հեղինակին նուիրումին, ինչպէս նաեւ հայ ժողովուրդի փրկուած խլեակներուն վերականգնումին օգտակար դառնալու անոր յանձնառութեան:

Տանըլտ Պլոքսհամ, 2007

Պազըլի համալսարան, բժշկական բաժանմունք Դեկանի գրասենեակ

Հետեւեալը նշանակուած է Պատուոյ բժշկական դոկտոր

Պարոն Եագոյ Քինցլեր

Սարկաւագ, Վալցենհաուզ, Ափփընցելէն

Որ, Հայաստանի մէջ աւելի քան քսանհինգ տարի քրիստոնէական սիրով հոգաց անհամար հիւանդներու եւ աղքատներու, նաեւ քաջասրտօրէն դիմադրեց հայ ժողովուրդին վիճակուած արիւնալի աղէտը.

Որ, այս մեծ արեւիքէն ետք, հազարաւոր մանուկներ փոխադրեց Լիբանան՝ դէպի ապահովութիւն, իսկ առողջներուն սորվեցուց մասնագիտութեան ճամբով ինքնաբաւ ըլլալ, միաժամանակ աշագուրկներուն եւ անկարներուն համար մշտական տուն մը հիմնելով.

Որ, ի վերջոյ կրցաւ Պէյրութի ծովափին թշուառագոյն պայմաններու մէջ գտնուող հսկայական վրանաքաղաքը վերածել բնակելի վայրի եւ իմաստուն խորհուրդներով կրցաւ պայքարիլ եւ ոչնչացնել թոքախտի եւ մալարիայի համաճարակները, որոնք ծանրօրէն կը սպառնային այդ վայրի բնակչութեան.

Որ, իր հաւատարիմ կեանքի ընկերոջ հետ, քառասունհինգ տարուայ անխոնջ նուիրումով, հազարաւորներ փրկեց ծանր տանջանքներէ եւ ստոյգ մահէ, կատարեալ մարդասիրութեան օրինակ ծառայելով, զոր կ'արժէ արձանագրել բժշկութեան լաւագոյն ձեռքբերումներու շարքին:

Պազըլ, 22 նոյեմբեր 1947

Քրիստոսի արիւնն ու արդարութիւնն են
Իմ զարդարանքն ու պատուոյ պատմութեանը,
Որոնցմով պիտի կենամ Աստուծոյ առջեւ
Երբ երկինք երթամ:

Երգի մը տունը, որով Եագոյ Քինցլեր կը մահանայ

1922 սեպտեմբեր 8-ին Լուսին քան հարիւր հազար ասորիներ, հայեր եւ յոյներ սպաննուեցան Ջմիւռնիոյ մէջ:

1932 – 1953 Լուսին քան չորսուկէս միլիոն «կոլլագ» սպաննուեցաւ Խորհրդային Միութեան մէջ:

1933 – 1945 Լուսին քան հինգ միլիոն հրեայ սպաննուեցաւ Եւրոպայի մէջ:

1937-ին Լուսին քան երկու հարիւր հազար չինացի սպաննուեցաւ Նանկինի մէջ:

1953 – 1988 Լուսին քան մէկ միլիոն մարդ սպաննուեցաւ Հիւսիսային Բորնէյի մէջ:

1965-ին Լուսին քան հարիւր հազար «համայնավար» սպաննուեցաւ Ինտոնեզիոյ մէջ:

1966 – 1976 Լուսին քան հինգ հարիւր հազար «հակայեղափոխական» սպաննուեցաւ Չինաստանի մէջ:

1972-ին Լուսին քան հարիւր հազար հուծու սպաննուեցաւ Պուրունտիի մէջ:

1982 սեպտեմբեր 17-ին Լուսին քան հինգ հարիւր պաղեստինցի սպաննուեցաւ Սապրա եւ Շաթիլա գաղթականներուն մէջ [Լիբանան]:

1994 ապրիլ 6-էն ետք Լուսին քան ութ հարիւր հազար թուօսի սպաննուեցաւ Ռուանտայի մէջ:

1995 Յուլիսին Լուսին քան եօթը հազար պոսնիացի սպաննուեցաւ Սրեպարենիցայի մէջ:

2004-ին Լուսին քան յիսուն հազար մարդ սպաննուեցաւ Տարֆուրի մէջ:

2015 Յունուար 7-ին Լուսին քան 150 հոգի սպաննուեցաւ Պակայի մէջ՝ Նիկերիա:

«Այս մարդիկը անոնք են, որոնք կու գան մեծ նեղութենէն: Անոնք իրենց պարեգօտները լուացին եւ ճերմկուցին Գառնուկին արհիւնովը»:

Յայտնութիւն, 7:14



Յուցահանդէս նուիրուած Եագոպ Քինցլերի, ծնած եւ մկրտուած
Հունտվիլ

Յղացք եւ բնագիր՝ հովիւ Պեռնհարտ Ռօթըն, Հունտվիլ

Հայերէնի թարգմանութիւնը գերմաներէն բնագրէն՝
Լենա Գարակէօզեան-Իւրնէշլեան եւ Արմէն Իւրնէշլեան

Հայերէն գրքոյկի խմբագիր եւ ծանօթագրող՝
Արմէն Իւրնէշլեան

Պէյրուօ 2024

Էջադրում՝ Հուրի Քէստէնեան